1.

+

n. 827.

1153
551

1704

# ԳԻՐՔ
# ԲՈՒՐԱՍՏԱՆ ԱՂՕԹԻՑ.

## ՅՈՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿԻՆ ԲԱՆՔ ՄԱՂԹԱ-

նաց և խօսք ընդ այ յոյժ պիտանիք յարմարեցեալք ըստ եօթանց աւուրցն շաբաթու 'ի յօգուտ և 'ի շահաւէտութի անձանց քրիստոնէից :

Թարգմանեցեալ 'ի Լատինացւոց լեզուէ 'ի հայկական բարբառ . աշխատասիրութեամբ Ստեփաննոսի վարդապետի Լէհեցւոյ 'ի փառս մեծազօրին այ :

'Ի Հայրապետութեան Տն Նահապետի Սրբազան Կաթուղիկոսի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի .

Եւ տպագրեցեալ ըստ խնդրոյ երկուց եղբարցն . Իսրայելին . և Աբրահամին . որդւեամբ և ծախիւք իւրեանց . 'ի զբօսանս հայկազունեաց .

Եւ 'ի յամի փրկչին . ռչձդ . ին :

---

Եւ Հայոց . ռճծգ . 'ի Մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս :


A
G
A
H
E
F
F
F
B

## Ի [illegible] Աղօթից.

## Կ[illegible] Աստուծոյ.

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Ամէն.

Թագաւոր Թագաւորաց ստեղծող մեր և արարիչ Հայր և Որդի և Սբ Հոգի, երրորդութիւն և մի աստուածութիւն, զքեզ խոստովանիմ բոլորով սրտիւ իմով դաւանիմ և երկրպագանեմ, որ յոչնչէ գոյացուցեր զիս, որ ստեղծեր զհոգի և զմարմին իմ, և ամենայն բարեօք զիս զարդարեցեր, պահեցեր, պահպանեցեր, սիրեցեր. և նախախնամեցեր, տածեցեր, և սփոփեցեր, յամենայն վտանգի ինձ օգնական եղեր, և յամենայն կարևորութեան ինձ՝ ի թիկունս հասեր, յամենայն տրտմութեան զիս մխիթարեցեր, և յամենայն փորձութենէ զիս ազատեցեր, և մինչև



ցայս

ցայս կէտս պարաւանդեցեր, տեսանելով
զանօրէնութիւնս իմ ներեցեր. զապերախ
տութիւնս իմ և զանց արարեր, և առաւել
քան զբազումս որք զարդիւնս ունին ա-
ռաջի ա՟ծութե՛ն քոյ պաշտպանեցեր, և
յայս ժամ առաւօտուս ժամանեցուցեր,
փառք և գոհութիւն և երկրպագութիւն և
շնորհակալութիւն ստեղծողիդ իմոյ ա՟յ հօր
և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, միոյ, ճշմարտի,
կենդանոյ, և յաւիտենականի, Ամէն։

Ողջոյն քեզ մարիամ. լի շնորհօք տ՟ր ընդ
քեզ, օրհնեցեալ ես դու 'ի կանայս, և
օրհնեցեալ է պտուղ որովայնի քոյ յ՟ս,
սրբուհի մարիամ մայր ա՟յ, աղօթեա վ՟ն
մեր մեղաւորացս այժմ և 'ի ժամու մա
հուանն մերոյ, Ամէն։

Հայր մեր որ յերկինս ես, ս՟ր եղիցի
անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղի
ցին կամք քո որ՟պ յերկինս և յերկրի, զհաց
մեր հանապազորդ տուր մեզ այսօր, և թող
մեզ զպարտիս մեր; որ՟պ և մեք թողումք մե
րոց պարտապանաց, և մի տանիր զմեզ 'ի փոր
ձութիւն, այլ փրկեա զմեզ 'ի չարէ, Ամէն։

Գոհանամ զքեզ տ՟ր իմ և ա՟ծ իմ 'ի բոլորէ
սրտէ իմմէ, և 'ի բնաւից մտաց իմոց, զի
'ի գիշերիս յայսմիկ արժանի արարեր զիս
պահել և պահպանել. վ՟ս քոյոյ մեծի գը
թութե՟դ և բարերարութեդ, արդ աղա

չեմ զքեզ խոնարհութ՟բ, տուր ինձ զմե
ծագին շնորհ քո տ՟ր, առանց որոյ կոչինչ
կարեմ առնել, զի նովաւ կարիցեմ կառա
ւարել զիս այսօր. 'ի փառս քոյոյ ա՟ծայնոյ
հանդխավեհութ՟ն 'ի փրկութիւն հոգւոյ
իմոյ, և 'ի յօգուտ մերձաւորաց իմոց:
Այլ և օգնեա ինձ ով քաղցր տ՟ր իմ զի կա
րիցեմ այսու հետև սկսանիլ զբարիս խոր
հիլ. խօսիլ, և գործել, և փոխել զկենցաղա
վարուն իմ անպատեհ, և առնել զա՟մ ինչ 'ի
պատիւ և 'ի փառս անուան քոյ սրբոյ, Ամէն

Ա՟ծ յաւիտենական, 'ի խորոց սրտի իմոյ
գոհանամ զքէն, զի ստեղծեր զիս 'ի պատ
կեր քո, և պատուական արեամբ որդւոյ
քոյ միածնի փրկեցեր, և անթիւ բարերա
րութ՟բ քով մինչև ցայսօր մարդասիրապէս
պահպանեցեր, և յայսմ գիշերիս 'ի վտան
գից և 'ի չարեաց զիս պահելով մինչև 'ի
յսկիզբն աւուրս այսորիկ ամբողջ հասու
ցեր: Ո ինչ փոխարէն հատուցից քեզ տ՟ր
ընդ այսոցիկ, և ընդ այլոց ամենեցուն
զորս ետուր ինձ: Ահա տ՟ր զանձն իմ բո
լորովին ընդ բնաւից զօրութ՟ց և կարո
ղութ՟ց. ընդ բնաւից ըղձից և ցանկու
թեանց, և ընդ բնաւից խորհրդոց բանից
և գործոց նորին յօժարութ՟բ քեզ մատու
ցանեմ և նուիրեմ 'ի մեծագոյնս փառս
անուան քոյ սրբոյ, Ամէն:


Երբն

Ներընծայեմ և ես ընդ նմին զամ գործս, զորս փրկիչն մեր կատարեաց սիրով վզն փրկութե մերոյ 'ի վր երկրի. զի յառաւելութէ արդիւնաւորութեց նորին ընդ որ հաճեսցար, զօրանայցէ տկարութիւն իմ, լնուցի պակասութիւն իմ.

Որոյ և միջնորդութբն աղերսեմ 'ի քէն ուսուցանել ինձ զքոյդ բարեհաճումն, քան զի գիտեմ տր, թէ գալոց իցես մեծաւ քննութբ պահանջել զհամարս 'ի ծառայից քոց. և աստուստ զարհուրի սիրտ իմ 'ի բնաւից յանցուածոց իմոց 'ի խորհիլն իմ, թէ զորպիսիս դատաստանս ընդունելոց իցեմ 'ի քէն, և ոչ եմ հաւաստի. թէ յորում ժամու գալոց իցես, այլ 'ի խնդրել զհաշիւն տնտեսութն իմոյ.

Առ որոյ ապաւինեալ 'ի շնորհս քոյս, զոր բաղանս յառաջադրեմ ինձ կենցաղավարել այսու հետև ըստ հաճոյից քոց ածային, և ըստ պատեհաւորութն կոչման իմոյ. Եւ զի հրամայէ մեզ որդիդ քո միածին նախ խնդրել զարքայութին քո տր, ուստի ամփոփեցից և արտաքաշեցից զմիտս իմ 'ի բազմաց և յաւելորդաց զբաղմանց կենցաղոյս, զի մի նուաղիցի ժամանակն հոգալոյ զփրկութէ անձին իմոյ, որով հետև ընդունայն իմն է շահիլն զաշխարհս ամ, և զանձն իմ կորուսանելն.

Տ՟Ր իմ և Ա՟ծ իմ, երանի թէ այսօր յաջողի
ցին ճանապարհք իմ 'ի պահել ինձ զար
դարութիս քո։ Եւ արդարև ոչ է պա
տեհ գնալ 'ի ճանապարհս մեղաւորաց, և
'ի շաւիղս դժուարինս, յորս ոչինչ գտա
նի, եթէ ոչ զղջումն և թշուառութիւն,
քան զի թէպէտ 'ի յսկզբանն երևին քա
րիք և հաճելիք, սակայն կատարած նո
ցին առած է 'ի մահ. ուստի երդուայ և
հաստատեցի 'ի պահել զիրաւունս արդա
թեան քո. և ասացի թէ պահեցից զճա
նապարհս իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով.
դարձուցից զաչս իմ, զի մի՛ տեսցեն զու
նայնութի։ Երանի թէ զգուշութե՟ պա
հէի զսիրտ իմ, զի ոչ լքանէի 'ի բարեգը
թութէ քումմէ, արդ որով հետև այսպի
սիք եղեն ինձ բազմիցս առիթք վնասուց,
ոչ ևս զնոցանէ այսօր և 'ի բոլոր կեանս
իմ զբուռն հարից. ոչ արարից տ՟ր վ՟ն սի
րոյ քոյ, որում միայնոյ հաճոյանալ, ծա
ռայել, և հպիլ ցանկայ անձն իմ։
Արդարև տ՟ր զինչ օգուտ է կամիլն
զայս, եթէ ոչ դու տայցես զկարելն և
զկատարելն. քան զի 'ի զուր մարդ հաստա
տէ 'ի մտի իւրում, եթէ ոչ շնորհ քո
կարգադրիցէ զնա։ Դու գիտես տ՟ր զզ
տկարութի իմ, զի աղքատ և ողորմելի եմ,
և զոչինչ առանց քեզ առնել կարեմ, և ոչ
ևս

Ես խորհիլ զինչ, այլ 'ի քէն միայնոյ է
բաւականութիւն իմ։ Արդ արի և օգնեա՛
ինձ, և կատարելագործ շնորհիւ քով զօ
րացո՛ զիս, զի զոր կամիմ զբարին յաջողութ̃
կատարելոյ կարող լինիցիմ։ Եւ դու ամե
նասրբուհի կոյս մարիամ, պաշտպան իմ և
յոյս, օգնեա՛ ծառայի քում, մայրականաւ
քոյով գթութբ̃։ Նոյնպէս և դու հրեշ
տակ իմ պահապան, որ հրամանաւ այ̃
բարձրելոյն ընկալեալ ես զհոգաբարձու
թիւն անձին իմոյ, լուսաւորեա՛ և կառավա
րեա՛ զիս այսօր, և առաջնորդեա՛ 'ի ճանա
պարհս կենցութե̃։ 'Ի խորոց սրտի իմոյ
հեզութբ̃ մտաց աղաչեմ զքեզ ով գերա
պայծառ հոգի հրեշտակական, իշխան
արքայութեան, որ ես կարգեցեալ 'ի ժա
մու ծննդեան իմոյ յամենառատ աղբերէ
հանդիսավէհութեանն այ̃, 'ի պահպանու
թի և ի նախախնամութի իմոյ անարժանի
անձինս, պահեա՛ և պահպանեա՛ զիս այսօր
'ի պատրանաց, և 'ի խաբէութէ, և 'ի հնա
րից սատանայի, և տուր ինձ զօրութբ̃
նշանի սրբոյ խաչին յաղթահարել զա̃մ
ցանկութի մարմնական, զա̃մ հպարտութի
կենցաղոյս, և զա̃մ խաբէութի հնոյ օձին.
զի մի՛ մոլորեցի արտաքոյ հրամանաց փրկ
չին իմոյ, և գնայցեմ 'ի ճանապարհ խաւա
րային, մի՛ թողուր զիս ով պահապան հրեշ


տակ

տակ իմ, զի ո՞չ տեսանես ոսոխն մեր սատանայ կամի որ սալ զիս, և ձգել զիս 'ի խորս յուսահատութեան, այլ զինուորեա զիս զինուք սրբոյ եկեղեցւոյ, զի կարիցեմ ընդդիմամարտիլ ընդդէմ զօրութեց նր Ամէն։

Ով հրեշտակ Այ որ պահապան իմ ես, զիս քեզ յանձնեցելոյս գթութբ վերնականաւ լուսաւորեա այսօր, պահպանեա, ուղղեա, և կառավարեա Ամէն։

## Յելանելն ի տանէ ի դուրս.

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, Ամէն։

Խաղաղութիւն Տն մերոյ Յի Քի, և զօրութիւն ամենասուրբ չարչարանաց նր, նշան սրբոյ խաչին, և վերնագիրն յաղթական, այսինքն, Յս նազովրեցի թագաւոր հրեից, ամբողջութն երանուհւոյ կուսին մարիամու, պահպանութն սրբոց հրեշտակապետաց և հրեշտակաց, և օգնականութն ամ ընտրելոցն Այ եղիցին ինձ իմ, և ինձ ամ թշնամեաց իմոց, երևելեաց և աներևութից այժմ և 'ի ժամու մահուան իմոյ, Ամէն։

Ուղղեա Տր զգնացս իմ այսօր, և դիր պահապան աչաց իմոց, զի մի՛ տեսանիցեմ զունայնութն, սանձեա և զլեզու իմ, զի մի՛ յանցանիցեմ ընդդէմ քում հանդիսավէհութեանդ, Ամէն։

Տէր իմ յս՟ քս՟ որդի այ՟ կենդանւոյ, աղա չեմ զքեզ միջնորդութբ՟ հնգից սրբազա նից վիրաց քոյոց մարմնոյդ, զի հաճիցիս պահպանել այսօր զհինգ զգայութիւնս մար մնոյ իմոյ· տարտամերժեալ յինէն զբնաւ խորհուրդս, և զերևակայութիւնս աղտեղիս, որք հեռացուցանեն զսիրտ իմ 'ի քէն, և դու լեր յոյս իմ, և գանձ հոգւոյ իմոյ, Ամէն։

'Ի հատանելն ըզպատառն ընծայելոյն.

Յանուն Հօր և որդւոյ, և հոգւոյն սրբ ոյ, Ամէն։

Անցէք աստ ով խորհուրդք և մտած մունք վատթարք, և ընդունայնք, իսկ դու ով անձն իմ, պատրաստ լեր 'ի տանն այ՟ առ 'ի երկրպագանել· և գոհանալ ըզ տնէ այ՟ և զփրկչէն քումէ յէ քէ, Ամէն։

Տէր իմ և այ՟ իմ, մտանեմ ես 'ի տուն քո սբ՟ առ 'ի երկրպագանել քեզ, և գոհա նալ զքէն, և խոստովանիլ զանուն քո սբ՟, վս՟ զի բարի է՛ յոյժ, առ 'ի ընդունիլ ըզ թողութի մեղաց իմոց, և շահաւորիլ շը նորհիւ քով սրբով, Ամէն։

'Ի գնոյն տաճարի սրբոյ անջատոյն.

Երկրպագանեմ քեզ, և բարեբանեմ ըզ քեզ տր՟ իմ յս՟ քս՟ որ զօրութբ՟ սրբոյ խա



չին

չեն ազատեցեր զբոլոր աշխարհ. բաց Տր
զբերան իմ, զի օրհնիցեմ զանուն քո Տր,
և սրբեա զսիրտ իմ յամ ունայնութեց, և
'ի պիղծ խորհրդոց, զի ընդունակ լինի-
ցիմ քոյոց ամենայնոց շնորհացդ, Ամէն:

Մինչ դպիրն երգեն շխորհրդոյ երգենն.

Հայր յաւիտենական, որ այնպէս սիրե-
ցեր զաշխարհ, մինչ զի զորդին քո
միածին ետուր վա փրկութե մերոյ, զինչ
հատուցից քեզ փոխանակ այդ քանից բա-
րերարութեանցդ: Ահա որդին քո միածին
քեզ պատարագ, քան զի զոչինչ պատուա-
կանագոյն ունիմ քան զնա, որ այն քան սի-
րով և փափաքանօք տենչացաւ փրկութե
մերոյ, մինչ զի առաքեցեալ 'ի քէն զկեր-
պարանս ծառայի էառ, և զմահացու մար-
մին զգեցաւ, և ծնաւ յաշխարհի 'ի յար-
գանդէ կուսին, և եղև հնազանդ քեզ
մինչև 'ի մահ: Արդ Տր իմ, զայդ քան
անբաւ սիրոյդ զգործն յայսմիկ սրբազնու-
թե 'ի փառս և 'ի պատիւ անուան քո փա-
փաքիմ յիշատակել, դու ուրեմն ստացիր
և կառավարեա զսիրտ իմ շնորհիւ քով. զի
բարեպաշտութբ և ամ վայելչաբար կա-
տարել կարիցեմ, և հաճոյանայցէ քեզ
պաշտօնն իմ 'ի փրկութի հոգւոյ իմոյ:

## Մ՚ինչ ժողովուրդն տայ ողջոյն.

Ով քաղցրագունեղ յս̅, անկանիմ առ
ոտս քոյս մեծաւ խոնարհութ̅բ, զորս
և բաղձամ ոռոգել և լուանալ իմովք ար
տասուօք, վս̅ զի յարայիշեմ զտգեղութի
մեղաց իմոց, զոր ընդդէմ ա̅ծայնոյ հանդի
սաւէհութե̅ քում գործեցի։ Աստի և ա
ղաչեմ զքեզ տ̅ր, ողորմեաց ինձ մեղաւո
րիս, զի եմ աղքատ և թշուառ քո ստեղ
ծուած. վերագնեցեալ 'ի քէն արեամբ
քով պատուականաւ, և մի՛ խնայեա պատ
ժել զիս ըստ իմում անարժանութեան։
Տ̅ր իմ ահա՛ յիշեցի 'ի բոլորէ սրտէ իմմէ
զսխալանս իմ, և զհատուցումն նց̅, և զար
հուրեցայ։ Աստի մեծաւ խոնարհութ̅բ
խնդրեմ 'ի քէն զթողութի. յառաջադրե
լով ինձ օգնութ̅բ քոյոց շնորհաց ոչ եր
բեք այսու հետև վերաստահիլ 'ի նոյն յանցա
նս, և մեծաւ զգուշութ̅բ զհոգ ունիլ ան
ձին իմոյ. և զքեզ սիրել յա̅մէ սրտէ, Ա̅մէն։

## Մ՚ինչ տայ ցոյց ցուրջնաւորութեանց.

Ով ա̅ծ յաւիտենական, խնդամ միշտ և
հրճուիմ, զի դու ես այն, որ եսդ, և
ոչ այլ ոք է էակ, եթէ ոչ քև և 'ի քէն.
Ով մեծութի անհուն, դու բարւոք գի
տես զքեզ թէ զինչ ես, գիտես քաջապէս

 և

և զիս զի դու ես տ՟մ, իսկ թէ զինչն իմ խնդրիցես, ոչ այլ ինչ եմ, եթէ ոչ ոչինչ։ Ով ողորմած տ՟ր, աղաչեմ և խնդրեմ 'ի քէն, զթողութի՟ վ՟ս այնոցիկ բնաւից, որք կան 'ի մեղս մահկանացուս, և խոնարհապէս մաղթեմ 'ի քէն վ՟ս պատուական արեան քո և մահուան, զի ներշնչիցես 'ի ն՟ս զխղճմտանս կատարեալս, վ՟ս սխալանաց նոցին, ո՟պ զի անուն քո փառաւորիցի նոքօք և 'ի ն՟ս։ Ցնծամ միշտ և խայտամ ով տ՟ր իմ, մինչ նկատեմ զհրեշտակս որք քեզ երկիր պագանեն, բայց ողբամ զիս դառնապէս մինչ տեսանեմ զմարդիկ որք զքեզ անգիտանան և մոռանան։ Ես սակայն ընդ այնոսիկ երանելեաց հոգւոց քեզ յար երկրպագանեմ։ Ով թագաւոր փառաց, վերացո զսիրտ իմ 'ի բարձունս, ո՟պ զի փառաւորեսցից զանուն քո տ՟ր 'ի յերկինս, և զի զոր զինչ և առնիցեմ, զա՟մ վ՟ս քոյոց փառաց առնիցեմ, թարց զիմոյն խնդրելոյ անձին։

## Մ'ինչ ընթեռնուն զընթերցուածս նուիրականս

Տ՟Ր յ՟ս ք՟ս որ յ՟շխ եկեալ ես վարդապետ, և զճանապարհն ա՟յ մեզ ճշմարտութ՟ ուսուցանես, երբեմն 'ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար, այսօր ևս 'ի ձեռն գրոց աւետարանչաց և քարոզչաց



բանի

բանի քոյ 'ի յուսուցանելոյ ոչ դադարիս։ 'Ի մատուցանս արա՛ զմեզ փրկական վարդապետութբ՟ քով. բորբոքեա՛ և զսիրտս մեր նախանձու երկնայնոց իմաստութեանց, և տուր մեզ միշտ առնել զկամս քո, զի զհաւատն, որ 'ի լրոյ աւետարանին ծնանի, և զոր լեզու մեր բարբառի, բարոյք ևս կենցաղավարութն՟ մեր խոստովանիցի, զի մի՛ 'ի յաւելումն մեղաց և պատժոյ մեզ դարձցի գիտելն զկամս քո, և ոչ առնելն. զի երկաքանչիւրն պիտոյ է միայնոյ շնորհի քոյ. զի գիտասցուք և արասցուք ոպ՟ ծառայք անպիտանք, հաւատալով, թէ 'ի քէն է ամ՟ բարութն՟ մեր։

## Մ՝ինչ ընծայսն վերաբերին.

ՏՐ յս՟ քս՟ որդի այ՟ կենդանւոյ, և որդի փառաւորեցելոյ կուսին Մարիամու, 'ի յիշատակ և 'ի գոհաբանութն՟ անբաւ սիրոյ քոյ որով զքեզ բոլորովին 'ի վր՟ սեղանոյ խաչին մեզ պարգևեցեր, ահա զառաջի կայ ընծայս հացի և գինւոյ քեզ վեր ընծայեմ, զի նուիրեալ կացուցանիցես առաջի յաւիտենականի հօր քոյ. խառնելով ընդ սմին և զկատարումն մատուցմանն այնորիկ որով ինքդ 'ի խաչին մեռանելով զամենայնս մարմին քո և զարիւնդ վս՟ փրկութն՟ աշխարհի մատուցեր։ Արա՛ ու-



րեմն

քեամբ զի Նոյնոյ մարմնոյ և արեան քոյ մա տուցումն որ 'ի սրբազնութեան այսմիկ վե րանորոգի, և անարիւն 'ի ներքոյ հացի և գինւոյ կատարի, զպտուղ նոր արդեամբք ընկալցի, զի կենդանիք զշնորհս, և հա ւատով ննջեցեալք զհանգիստ, և վս որոց պատարագս մատուցանի զողորմութն և զկեանս յաւիտենականս ժառանգիցեն։ Եւ եղիցի պատարագս այս որ զպտուղ չարչարանաց և մահուան քոյ յինքեան պա րունակեալ ունի, փոխանակ անթիւ բա րերարութեց քոց առ մեզ արարելոցն, գո հացողական օրհնաբանութն։ և վս անհուն մեղաց յանցուցելոցն, և բարեացն անփոյթ արարելոց, և պատժոց արդիւնաւորելոց քա ւութն և փրկագործ բաւականութն։ Ամէն

## Մինչ տայ ողջոյն զատ ծնծղոյց.

Աղաչեմ զքեզ ով Տէր իմ ամենակարող, և Տէր իմ ողորմած, շնորհեա ինձ զզ խնդութն ընդ խաղաղութն. զսպուռն վարուց, զառեղի ապաշխարութն, զշնոր հըս և զմխիթարութն հոգւոյդ սրբոյ. և զյարատևութն 'ի գործս բարութն.

## Մինչ տայ սուրբ սուրբ սուրբ.

Ճշմարտապէս արժան, և իրաւ, ուղիղ



և

և փրկական է միշտ և յամ տեղիս գոհա
նալ զքեն տր, որ հայր ամենակալ. յաւի
տենական այ. քսի յսի, որով զմեծու
թն քո օրհնեն հրեշտակք. երկրպագանեն
տրութիւնք, գողան իշխանութիւնք, երկինք
և երկնից զօրութիւնք, և երանելի սերով
բէք, միաձայն ցնծութբ աղաղակեն, ընդ
որս և զմերս օրհներգութիս վեր ընկալցիս
աղաչեմք, մաղթողական խոստովանութբ
տօնելով, սբ սբ սբ տր զօրութեց, լի
են երկինք և երկիր փառօք քովք.

## Մինչ սա ասէ, կերգէ.

Ողջոյն քեզ ճշմարիտ այծ, ծնեալ 'ի մա
րիամայ կուսէն, որ զենար և մեռար 'ի
վր խաչին վս մարդկան, յորում և բա
ցեալ եղև տիգաւ կող քո սբ, և բղխեաց
արիւն և ջուր, լեր ինձ աղաչեմ 'ի մնունդ
մինչ տակաւին կենցաղավարիմ յերկրի, և
առաջնորդեա ինձ 'ի յերկինս 'ի վերջին
պահու կենդանութե իմոյ, ամէն: Ով
բարի յս, ով քաղցր յս, ով որդի մա
րիամու, ողորմեաց ինձ: Ողջոյն քեզ ճշ
մարիտ մարմին այծ յարականին յի. բևեռ
եալ 'ի խաչին յաղագս իմոց յանցանաց:
Ողջոյն քեզ ճշմարիտ հաց հրեշտակաց.
իջեալ 'ի յերկնից առ 'ի կերակրել զիս:
Ողջոյն քեզ ով կեցութի աշխարհի. Ողջոյն

քեզ բան հօր ա՟յ: Ողջոյն քեզ ընծայ որբազան. Ողջոյն քեզ մարմին կենդանի: Ողջոյն քեզ ա՟ծութեն կատարեալ: Ողջոյն քեզ կեանք յաւիտենական: Ողջոյն քեզ մարմին մեծագին տ՟ն մերոյ. և վերանորոգողի անձին իմոյ, արա՛ առ իս ողորմութի՟ քո

Մ՝ինչ տան տասնեկելոյ օրհնոյ.

Ամենաբարեգութ Հայր ընկալ զայս սըրբազան պատարագս 'ի ձեռանէ քահանային, որ միաւորեալ ընդ ամենանըբ պատարագին զոր քեզ որդին քո սիրելի 'ի յետին ընթրիսն 'ի վե՟ր խաչին մատոյց վս՟ իմ, և վս՟ ամենեցունց որոց յաղագս զմեռանիլ յանձն էառ: Նայեաց յերեսս քն՟ որդւոյ քոյ սիրեցելոյ, ընդ որ հաճեցար, և վս՟ յաւիտենական սիրոյդ որով դու զմեզ այդ քան սիրեցեր, և վս՟ անբաւ արդեանց նորնոյ միածնի քոյ. վս՟ մարդեղութե՟ նր՟, վս՟ գալստեան նր՟, վս՟ ծննդեան և թլփատութե՟ նր՟, վս՟ արտասուաց և չարչարանաց նր՟, վս՟ մահուան և թաղման նր՟, և վս՟ անսպառելի սիրոյն որով զայս ա՟մ կրեաց նա վս՟ մեր արա՛ զսա 'ի քաւութի և 'ի թողութի մեղաց մերոց: Նաև վս՟ արժանաւորութեց ա՟մ սրբոց առաքելոց, մարգարէից, հայրապետաց, մարտիրոսաց, ճգնաւորաց, կուսանաց և ա՟մ ընտրելոցն որք են 'ի յերկինս, յիշեա՛ և ողորմեաց ե-

ջերմեցւոյ քում սրբոյ, և վերակացուացնորին, վեհապետին, մերոց · հայրապետին, մերոյ Թագաւորին մերոյ, իշխանին մերոյ. և ամ ժողովրդեանս, եւ առաւել եղկելի մեղաւորիս որ Թափուր 'ի բնաւից բարի գործութէց ապաւինեալ եմ 'ի քոյդ բարեգթութիւն և յուսամ միջնորդութբ սըրբոյ պատարագիս ընդունիլ զշնորհ քո մբ։

## Մինչ տայ ի սրբութիւն սրբոց·

Ողջոյն քեզ ով մարմին Քրի· ծնեալ 'ի սըրբոյ կուսէն մարիամու, մարմին կենդանի, ածութն ամբողջ, և ճշմարիտ մարդ։ Ողջոյն քեզ ով խոկական կեցութն ճանապարհ և փրկութն աշխարհի, աղաչեմ ըզ քեզ փրկեա զիս 'ի չարէ։ Ողջոյն քեզ ով արիւն Քրի երկնային, և ամենամբ ըմպելի, հեղեղ կենարար, որ լուանաս ըզ մեղս աշխարհի· Ողջոյն քեզ ով արիւն պատուական, ցողեցեալ 'ի վերէ կողին Քի բեւեռեցելոյ 'ի վր խաչին, աղաչեմ զքեզ մաքրեա զիս 'ի մեղաց։ Դու Թագաւոր փառաց Քս, դու հօր այ մշտնջենաւոր որդի, դու առ 'ի փրկել զազգ մարդկային ոչ խորշեցար յարգանդէ կուսին, դու կոխեալ զխայթոց մահու, բացեր հաւատացելոց զերկնից արքայութիւն, դու ընդաջմէ այ նստիս 'ի փառս այ հօր· սոր-



աղա

աղաչեմ զքեզ, Հաս 'ի թիկունս ծառայիս քո, զոր արեամբ քով վերագնեցեր։

## Աղօթք զկնի պատարագին.

Տէր իմ յս̃ ք̃ս որ ո՛չ միայն արժանի համարեցար առնուլ զմեր զմարմին, և համբերել այնքանեաց չարչարանաց, և հալածանաց, պատժոց, և մահու խստագունեղի, այլ և հաճեցար մեծաւ քոյով շնորհիւ պարգևել մեզ յեկեղեցւոյ քում սրբոյ ընդ սրբազանի այսմիկ հաղորդութեան որ 'ի վերայ սրբոյ սեղանոյս, և լինել նուէր ընծայ, Հօր, և շնորհ երկնային, մինչև 'ի վախճան յաւիտենից։ Աղաչեմ զքեզ 'ի ձեռըն զօրութեան և արդեանց այսորիկ ազնուագունեղի և անճառելւոյ սրբազնագործութեան պատարագիս, զոր այժմ լուայ և տեսի, յորում երևին բնաւք գերազանցք խորհուրդք քոյոց վարուց, չարչարանաց և մահուան, զի յանձն եղիցին քեզ այսօր հոգի և մարմին իմ. և որք են 'ի տան իմում, ո՛չ զի և մեք արդիւնաւորիցիմք ընդունիլ զներումն մեղաց մերոց. և կեալ վարուք քրիստոնէականօք, այլ և յանձն եղիցի քեզ 'ի ձեռն զօրութեան այսորիկ սրբազնութեան բարձրացումն սրբոյ եկեղեցւոյ. միաբանութիւն քրիստոնէից. դարձումն մեղաւորաց. ներումն մեղաց ննջեցելոց քրիստոնէից.



Աղօթք

## Աղօթք յառաջ քան զխոստովանութիւնն.

Ով բարեգութ տ̄ր իմ յս̄ ք̄ս, աղաչեմ զքեզ 'ի բոլորէ սրտէ իմմէ, և 'ի բնաւից մտաց իմոց. ընկալ զխոստովանութի իմ, զոր կամիմ առնել այսօր առաջի քո. և տուր ինձ զճշմարիտ զղջումն վս̄ բնաւից իմոց յանցանաց: Ով քաղցրագունեղ յս̄, առաքեա՛ 'ի հոգի իմ և 'ի միտս իմ զլոյս ճշմարտութե քո, առ 'ի գիտել և ճանաչել ըզ բնաւս մեղս, և զյանցանս, զորս պարտիմ խոստովանիլ առաջի քո. և առ 'ի ուսուցանել ինձ, զի կարիցեմ լրութբ̄ սրտի և ջերմեռանդութբ̄ մատչիլ առ այսքան ահաւոր խորհուրդ ապաշխարութե, Ամէն.

## Աղօթք զկնի խոստովանութեան.

Ով տ̄ր իմ և փրկիչ իմ յս̄ ք̄ս, աղաչեմ զքեզ, հաճեաց քոյով շնորհի վերընդունիլ զխոստովանութի իմ. և լից զպակասութի սորին քոյով անհնիւ բարեգթութբ̄դ, շնորհեա՛ ես զներումն իմոց բնաւից յանցանաց. քոյով ողորմութբ̄դ. զի արժանի եղէց ի փառս քոյս մեծագոյնս ընդունիլ զկենարար մարմին, և զարիւն քո, Ամէն

## Աղօթք յառաջ քան զհաղորդութիւնն.

Ով տ̄ր իմ յս̄ ք̄ս, իրաւի ես ոչ եմ արժա



նի

նի ընդունիլ զքեզ. սակայն վս կարեւորութ
իմոյ գամ առ քեզ. զի հիւանդութն իմ քև
բժշկիցի, և խաւար մտաց իմոց քև փարատի
ցի. աղքատութն իմ քև փարթամանայցէ, և
գործք իմ բարիք քև արդիւնաւորիցին, Ամէ

## Աղօթք յետ հաղորդութեան.

Յիշեա ով տր իմ յս քս, զի ետուր ըզ
քեզ 'ի մահ վս իմ, և զկենարար մար
մին և զարիւն քո բաշխեցեր 'ի կենդանու
թն իմ, արա ուրեմն, զի լինիցին սոքա 'ի
քաւութն և 'ի թողութն մեղաց իմոց, և
մի 'ի դատապարտութն հոգւոյ իմոյ,
որովք արժանաւորեցոյց պարակցիլ ընդ
սրբոց քոց, և երանեցայց տեսութբ քոյոց
փառաց. Ամէն:

## Տաղ գոհացողական ի վերայ պարգեւացն զոր ընդունեցելոց ի տեառնէ.

Զքեզ տր օրհնաբան եմք.
զքեզ համայնից տր դաւան իմք:
Զքեզ պաշտէ երկիր համ այն.
հայր անսկիզբն և անվախ ճան:
Զքեզ հրեշտակաց զօրք ամ.
երկինք և պետք միանգամ այն:
Զօրք քրովբէից և սրովբ էից.
երգեն միմեանց լեալ ձայնա կից:


Սէ

Մ՛ու մը մի մըր զօրու    թեց·
ըստ եսայեայ նախասու    թեց:
Լի են երկինք երկիր քո    ովք·
վայելչութե մեծի փա    ռօք:
Օ՛ քեզ փառաւոր դասք ընտրե    լոց·
երկոտասան առաքե    լոց:
Թ՛իւ գովելի մարգար    էից·
տնօրէնութեդ նախատե    սից:
Ս՛րամ պայծառ մարտիրո    սաց·
գովեն երգով զո՛րդ փա    ռաց:
Ե՛կեղեցի ո՛ր դաւա    նի·
ըզ քեզ մինչև 'ի ծագս եր    կրի:
Ը՛զ հայր անբաւ վայելչու    թե·
և զմիածին նոյնոյ բնու    թե:
Ը՛զ ո՛ր հոգին բնութենա    կից·
մխիթարիչ քրիստոն    էից:
Դ՛ու ես Ք՛ս փառաց ար    քայ·
և միածին հօր մշտա    կայ:
Ը՛ու 'ի փրկել զմարդ հողա    ծին·
ոչ խորշեցար յաղեաց կու    սին:
Դ՛ու կոխելով զմահու խայ    թոց·
բացեր զերկինս մկրտե    լոց:
Ը՛նդ աջմէ հօր 'ի փառս բազ    մեալ·
դատաւոր ես գալոց սպաս    եալ:
Ա՛ղթեմք օգնել ծառայից    քոց·
զորս փրկեցեր արեամբ գը    նոց:
Փ՛առաւորեա՛ զմեզ յաւիտ    եան·
ընդ ո՛րըս քոյս յարքայու    թե:



Ը՛զ

Ըզ ժողովուրդ քո աղա չեմ․
զժառանգութիւն քո տէր օրհ նեա՛։
Հովեա զնս՟ միշտ անսա սան․
և բարձրացո ՚ի յաւիտ եան։
Ըզ քեզ օրհնեմք զօրն անդա դար․
զանունդ գովեմք միշտ ան սպառ։
Շնորհեա այսօր տէրդ գթած․
պահել ըզ մեզ առանց մե ղաց։
Ողորմեաց մեզ տէր ողոր մեաց․
և հայրախնամ աչօք նայ եաց։
Ողորմութիւնդ ընդ մեզ լի ցի․
յոյս մեր ՚ի քեն մի վրիպե ցի։
Քեզ ապաստան եմք ապա քէն․
մի ամօթով լիցիմք ՚ի քէն։
Քեզ փառք տացի ձայնիւ եր գոց․
՚ի յերկնայնոց և յերկրայ նոց։


C
C
C
B
E
A
D
D

## Կրթութիւն Երեկոյեան.

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ սըր բոյ. Ամ՟էն:

Անբաւելի բարութ՟ի, սրտի մտօք գոհանամ զքեն, 'ի վ՟ր ա՟մ բարերարութ՟եց քոց, զորս առ իս անարժանս այսօր, և զա՟մ աւուրս կենաց իմոց առատապէս երևե ցուցեր և արարեր: Եղիցի քեզ օրհնութ՟ի և փառք 'ի բնաւուց ընտրեցելոց քոց 'ի յեր կինս և 'ի յերկրի, և յա՟մ արարածոց քոց 'ի յաւիտեանս յաւիտենից: Իմաստութ՟ի յա ւիտենական, մեղաք ամենեքեան առաջի քո, բայց զյանցանս իւր ով 'ի մի առնու: Դու լոյս ճշմարիտ, լուսաւորեա զխա ւար իմ, զի տեսից և գիտացից, թէ զի՟նչ պակաս իցէ յինէն: Դու գիտես զգաղտ նիս սրտից, և զա՟մ գնացս մեր դու նկա տես, արդ տուր մեզ զի զոր ինչ այսօր



առ

առ քեզ խորհելով, խօսելով և կամ գոր
ծելով մեղօք, զայն կատարելապէս 'ի միտ
ածցուք 'ի դարձումն անձանց մերոց։
Տ՛Ծ քննիչ սրտից և երիկամաց, ես եղկելի
և թշուառական այսօր մեղայ յերկինս
և առաջի քո. և զի արդ կարեմ թագչիլ 'ի
քէն, որ յառաջագոյն տեսեր զճանապար
հըս իմ. և 'ի միտս առներ զխորհուրդս իմ
'ի հեռաստանէ. Օ ինչ արարից քեզ պա
հապան մարդկան, վայ ինձ Տր, զի մեղայ,
և յանցանք իմ 'ի քէն ոչ ծածկեցան. այլ
թէ և զանձն իմ արդարացուցանել կամի
ցիմ, ահա սիրտ իմ յանդիմանէ զիս։ Ո՜
որոյ հայր ողորմութեց, որ ոչ ուրախանաս
'ի վ֊ն կորստեան մեղաւորաց. նայեաց յիս
ըստ բազում գթութե քում։ Օ ի ըզ
ընաւս չարիս աւուր այսմիկ և բովանդակ
կենաց 'ի մոց գնեմ առաջի սիրոյ քոյ յա
ւիտենականի. որով սիրեցեր զմեզ. Բան
զի ցաւիմ 'ի խորոց սրտէ, զի ապերախտ
եղէ առ այնքան բարերարութիւն քո. և
զայրացուցի զքեզ ծայրագոյն բարին իմ։
Տ՛ր, աղերսեմ ուրեմն 'ի ձեռն մահուան և սի
րոյ որդւոյ քոյ յի՛ք թողուլ ինձ թշուա
ռականիս, և ներել ինձ մարդասիրապէս.
զորինչ այսօր առ քեզ և առ մերձաւորս
իմ մեղայ։
Տ՛. մենազօր ա՛մծ, առանց որոյ ա՛մծ պետական
նին

նին զօրութեն ոչ ինչ է 'ի մարդ առաջի
քո և ա̃մ ատենի երկնայնոցն զօրաց հաս-
տատապէս յառաջադրեմ ինձ անշարժ
որաւիւ հետևիլ կանոնի բարեհաճութե
քո. զբարս իմ ուղղել, կոչման իմում
առ.քեզ զգուշանալ. 'ի մեղաց համայնից
և 'ի վտանգից փախչիլ: Մտուգիւ ես զայս
սուրբ կամիմ, բայց առանց քեզ ոչ կարեմ.
արդ դու որ տաս զկամիլն, յաւել ևս ըզ
կարելն և զկատարելն: Տուր զոր հրամայ
ես, և հրամայեա զոր կամիս, զի զգաստու
թե արդարութե և բարեպաշտութե կեցից
յայսմ աշխարհիս, և 'ի հանդերձելումն
գքեզ ընդ ս̃բս քո օրհնեցից 'ի յաւիտեան.
Ընկալ զայս ցանկութի իմ տ̃ր, ոչ զխունկ
առաջի քո. զպատարագ երեկոյիս, և զա
նազան խնդրուածս իմ մի անտես առ
ներ վ̃ս անհուն ողորմութե քո:
Իսկ դուք ս̃րբք ա̃յ, և մանաւանդ սրբու
հի կոյս մարիամ ա̃ծածին, և ս̃բ հրեշ
տակդ իմ պահապան, և համայնք զօրք
երկնայինք, որք անդադար օրհնէք զա̃ծ,
մինչ ես սակաւ ինչ հանգչիմ ննջելով,
դուք վ̃ս իմ հոգացէք, և զիս ա̃յ յանձն
արարէք. զի պահիցէ զիս յորոգայթից
թշնամեաց իմոց. որք 'ի ննջելն մեր միշտ
տքնին պատրաստք առ 'ի վնասել մեզ.
Եղիցի ա̃ծ պաշտպան իմ, և ոչինչ հա


կառա

կառակութիւն կարասցէ վճարել ինձ։

Տէր տուր յաւել 'ի մեզ զհաւատ, զյոյս, և զսէր. արմատախիլ արա զամ մեղս, զմոլութիւս, զանմիաբանութիւն, զանհաւատութիւն, զմոլորութիւն, և զկարծիս։ Սաստեա մոլելոց, դարձո զանհաւատս, հաւաքեա զօտարեալսն 'ի միաբանութիւն եկեղեցւոյ, և ցոյց նոցա զլոյս շնորհաց քոց. զհովիւս եկեղեցւոյ, զառաջնորդս և զայլս գլխաւորս, զթագաւորս, և զիշխանս յամենից հակառակորդաց պահեա. զմեղաւորս 'ի ճշմարիտ ապաշխարութիւն դարձո. զարդարս հաստատուն պահեա. զպաշտօնեայս քոյս զօրացո. զգործունեայս դարմանեա. զտխրեցեալս սփոփեա. զհիւանդս բժշկեա. կարօտելոց զկարիս պատրաստեա. պանդխտաց զդարձ 'ի հայրենիս պարգևեա. ալէկոծելոց զնաւահանգիստ փրկութեան շնորհեա. Ամէն։

Ով բարի Յիսուս, վասն սիրոյ հօրն յաւիտենականի, և վասն վերջին բանին զոր ասացեր 'ի վերայ խաչին, որով և զհոգիդ քո 'ի ձեռն հօր աւանդեցեր մաղթեմ 'ի քեն ընկալ զհոգի իմ 'ի կատարածի կենաց իմոց։

Հոգի Սուրբ Աստուած ողորմեաց ինձ, և Սուրբ ազդեցութեամբ քով զօրացո զիս, և մանաւանդ 'ի ժամու մահուան իմոյ։

Ամենասուրբ երրորդութիւն մի Աստուած, ողորմեաց



ինձ,

ինձ, այժմ և 'ի ժամու մահուան իմոյ· Ամէն
Այց արա՛ աղաչեմք տ՟ր բնակութե՟ս այս
միկ, և զա՟մ նենգութի՟ թշնամւոյն 'ի նմա
նէ 'ի բաց մերժեա՛, և հրեշտակք քո ս՟բք
բնակեսցեն 'ի նմա, որք և զմեզ 'ի խաղաղու
թե՟ պահպանեսցեն, օրհնութի՟ քո լիցի 'ի
վ՟ր մեր միշտ, տ՟բ մերով յ՟իւ ք՟իւ Ամէն։
Ով հրեշտակ ա՟յ որ պահապան իմ ես, զիս
քեզ յանձնեցելս գթութե՟ վերնակա
նաւ, լուսաւորեա՛ այսօր, պահպանեա՛,
ուղղեա՛, և կառավարեա՛· Ամէն։
Ա՟ծ որ զարմանականաւ կարգիւ, զսպա
սաւորութի՟ հրեշտակաց և մարդկան տնօ
րինես, շնորհեա՛ մեզ այցարար, զի որովք
քեզ յանդիման եղելովք պաշտօն քեզ 'ի
յերկինս մատուցանի, նոքօք և կեանքն մեր
'ի յերկրի պաշտպանեսցի· տ՟բ մերով յ՟իւ
ք՟իւ· Ամէն։
Լուսաւորեա՛ տ՟ր ա՟ծ աղաչեմք զխաւարս
մեր, և զնենգութիւս բոլորի այսորիկ գիշե
րիս տարամերժեա՛ 'ի մէնջ, զի դու ես
այցելու մեր, տ՟բ մերով յ՟իւ ք՟իւ· Ամէն։
Գոհանամք զքէն Թագաւոր ա՟ծ ամե
նակարող, յաղագս համայնից բարերարու
թեանց քոց 'ի քէն առ մեզ եղելոց։
Աղաչեմք տ՟ր, հասո՛ ամենից մերոց յա
նուն քո տ՟ր բարերաց զկեանս յաւիտենա
կանս վ՟ս բարեաց զորս արարին մեզ, հո

գիք ամենից հաւատացելոց ննջեցելոց շը
նորհիւ և ողորմութբն տն․ հանգիցեն 'ի
խաղաղութե․ Ամն։

Ով մշտնջենաւոր և ողորմած տր․ ահա
աւասիկ ես նուաստ ստեղծուած քո, ըստ
կարի իմում և ըստ տգիտութե անկեալ
յերկիր առաջի քո մեծութեդ, վեր ըն
ծայեմ քեզ զհամայնս գոհութիս, զորս
կարէ հաւատարիմ ոք ծառայ նուիրել
տն իւրում առատաբաշխի, վս անթուե
լեաց բարերարութեցն զորս մինչև ցայժմ
ինձ արարեր․ Եւ հայցեմ 'ի քէն վս քոյոյ
գթածի բարեհաճութեդ մի անտես առ
նիցես զիս, զի մի անկանիցիմ յաչաց քոց․
Այլ և գոհանամ զքէն և բարեբանեմ
զքեզ, վս զի յաւուր այսմիկ բարեգթա
բէս պահպանեցեր զիս, ազատեցեր և պա
հեցեր 'ի բազմաց վտանգից․ ըստ հոգւոյ
և ըստ մարմնոյ․ Թէ և վս մեղաց իմոց ար
ժանի էի ես 'ի բաց մերժիլ 'ի քէն․ Ուստի
'ի խորոց սրտի իմոյ ապաշաւեմ զյանցանս
իմ, զորս գործեցի այսօր, ընդդէմ քում
հանդիսավեհութեդ, վս ոչ սիրելոյ ըզ
քեզ, և վս ոչ ընդունելոյ և պահելոյ զպա
տուիրանս քոյս, ըստ որում պարտէր ինձ
առնել․ Արդ շնորհեա ինձ ով մարդասէր
տր, անցուցանել զգիշերս զայս խաղաղա
կանաւ հոգւով, թարց անկանելոյ 'ի ցնո
րս

ցքո դիւականս, քան զի 'ի ձեռս քոյ
յանձն առնեմ զհոգի իմ, 'ի գիշերիս յայս
միկ, և զամ աւուրս կենաց իմոց։ Պահեա՛
ուրեմն պահպանեա՛ և ազատեա՛ զիս 'ի գի
շերիս յայսմիկ. և յամենայն ժամու 'ի փառս
քոյ և 'ի պատիւ ամենօրհնեցելոյ սրբուհ
ւոյ կուսին մարիամու, 'ի փրկութիւն հոգւոյ
իմոյ և 'ի յօգուտ մերձաւորաց իմոց. Ամէն։

## Տաղ երեկոյեան։

| | |
|---|---|
| Բան զմտանել արեգա | կան. |
| խնդրեմ զպատճառ արարչա | կան. |
| լեր ըստ քոյին բարեգթու | թե. |
| վերակացու և պահա | պան։ |
| 'Ի բաց կացցեն գիշերայ | ին. |
| երազք ցնորք սատանայ | ին. |
| անցահարեա զմեր թշնա | մին. |
| զի մի մարմինք մեր պղծի | ցին։ |
| Մեր օգնական 'ի մեզ նայ | եա. |
| զդարանակալս 'ի բաց վա | նեա. |
| ըզ քո ծառայս կառավա | րեա. |
| զսիրտ մեր առ քեզ արթուն պահ | եա։ |
| Հիշեա զմեզ տէր մի գթ | ոյ. |
| 'ի վայրաքարշ յայսմ մար | մնոյ. |
| որ ես պաշտպան մերոյ հոգ | ւոյ. |
| ըզ մեզ քեզ այժմ առ մերձե | ցո. |
| Փառք և պատիւ հօր | ոյ. |
| և միածնին նորին որդ | ւոյ. |



ընդ

ընդ էակցին հոգւոյն սր   բոյ։
որոյ վրաւ ընաւեին ո՛չ   գոյ։

Կերպ ասելոյ ողջունին տեառն մարիամու յառաւօտու և միջօրէի և երեկոյի.

Հրեշտակ տն աւետեաց կուսին մարիամու, և յղացաւ 'ի հոգւոյն սրբոյ։
Ողջոյն քեզ մարիամ։
Ահաւասիկ կամ աղախին տն, եղիցի ինձ ըստ բանի քում։ Ողջոյն քեզ մարիամ։
Եւ բանն մարմին եղև, և բնակեցաւ 'ի մեզ։ Ողջոյն քեզ մարիամ։
Զշնորհս քոյս աղաչեմք տր հեղ 'ի սիրտս մեր, զի որք հրեշտակին աւետեօքն քի որդւոյ քո զմարմնաւորութին ճանաչեցաք, չարչարանօք և խաչիւ նորին 'ի յարութն փառսըն ժամանիցեմք յիւ քիւ տր մերով. Ամէն

Կերպ ասելոյն օրհնելոյ աշխարհականաց.

Օրհնեա՛ աղաչեմք տր զմեզ, և զայս ուխտ քոյս պարգևս, զորս 'ի քումմէ առատութենէ ընդունելոց եմք. յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. Ամէն։ Հայր մեր։

Գոհաբանութիւն յետ ասելոյն.

Գոհանամք և շնորհակալ լինիմք զքեն ամենակարող տծ վս համայնից քոյոց

բարերարութեանցդ, որ կեաս և թագաւորես 'ի յաւիտեանս յաւիտենից. Ամէն։ Հայր։

### Կերպ խնդրելոյ [illegible] ճանապարհորդի

Ի ճանապարհս խաղաղութեան և բարեաց
յաջողութեան ուղղեսցէ զմեզ ամենակարող
և ողորմած Տէրն և Աստուածն մեր։

Օրհնեալ Տէր Աստուած իսրայէլի որ յայց ել.
և արար զփրկութիւն ժողովրդեան իւրոյ։

Յարոյց մեզ զեղջիւր փրկութեան 'ի տանէ
դաւթի ծառայի իւրոյ որպէս խօսեցաւ բերա
նով սրբոց, որք յաւիտենից մարգարէքն էին։
Փրկութիւն 'ի թշնամեաց մերոց. և 'ի ձե
ռաց ամենայն ատելեաց մերոց։

Առնել ողորմութիւն առ հարս մեր. և յի
շել զկտակարանս սրբութեան իւրոյ։

Զերդումն, զոր երդուաւ աբրահամու
հօր մերոյ տալ մեզ. առանց երկիւղի ըզ
փրկութիւն 'ի թշնամեաց մերոց։

Պաշտել զնա սրբութեամբ և արդարութեամբ
առաջի նորա. զամենայն աւուրս կենաց մերոց։

Եւ դու մանուկ, մարգարէ բարձրելոյն
կոչեսցիր. գնասցես առաջի Տեառն. պատրաս
տել զճանապարհս նորա։

Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդեան
իւրոյ. 'ի թողութիւն մեղաց մերոց։

Վասն գթոյ ողորմութեան Աստուծոյ մերոյ. որով երևե
ցաւ մեզ արեգակն 'ի բարձանց լուսաւորա
նել զխաւար մեր։

Ծագել զլոյս ՚ի վերայ այսոցիկ որք նստեալք ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու. ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան.

Փառք Հօր.

Եւ սուրբ հրեշտակապետն ռափայէլ ուղղեկցեսցի ընդ մեզ ՚ի ճանապարհի, որ զի խաղաղութեամբ առողջութեամբ և խնդութեամբ դարձցուք առ մերայինս: Տէր ողորմեա. Քրիստոս ողորմեա: Տէր ողորմեա: Հայր մեր: Կեցո զծառայս քո Աստուած մեր զյուսացեալս ՚ի քեզ: Առաքեա առ մեզ Տէր զօգնութիւն ՚ի սրբութենէ, և ՚ի սիոնէ պաշտպանեա զմեզ: Եղեր մեզ աշտարակ ամրութեան. յերեսաց թշնամւոյն: Մի՛ ինչ շահեսցի թշնամին ՚ի մեզ, և որդին անօրէնութեան մի՛ վնասիցէ մեզ: Տէր Աստուած օրհնեալ, Տէր զօր հանապազ առաջնորդեսցէ մեզ Աստուած փրկիչ մեր: Զճանապարհս քո Տէր ցոյց մեզ, և զշաւիղս քո ուսո մեզ: Երանի թէ ուղղեսցին ճանապարհք մեր, առ ՚ի պահել զարդարութիւնս քո: Եղիցին ամենայն դժուարինք ՚ի դիւրինս, և առապարք ՚ի ճանապարհս հարթս: Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, զի պահեսցեն զքեզ յամենայն ճանապարհս քո: Տէր լուր աղօթից մերոց, և

աղաղակ մեր առ քեզ գայցէ:

Շնորհեա՛ աղաչեմք ամենակարող Աստուած, զի ժողովուրդ քո ՚ի ճանապարհս կեցութեան

ընթա

ընթանայցէ· և երանելւոյն յոհաննու նախընթա
ցին քոյ յորդորման հետևելով· առ այն որ քա
րոզեաց յանդորրաւէտս ժամանեցէ· այսինքն առ
տէրն մեր յս̃ քս̃· Ամէն։



Ի աւուրս Շաբաթուց.

Յաւուր Կիրակէի.

Յաղագս պաշտաման և երկրպագութեան ամենա-
սուրբ Երրորդութեան.

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱ-
կարող յաւիտենական Աստուած, թէ-
պէտ մեղաւոր և անարժան եմ
ես, սակայն գոլով գործ ձեռաց քոց մատ-
չիմ առաջի քոյ առ 'ի օրհնաբանել զքեզ.
զի դու ես Աստուած իմ, Տէր իմ. արարիչ իմ.
փրկիչ իմ. և կեցուցիչ իմ. զոր և միայն զի-
տեմ կարող շնորհելոյ զպարգևս շահա-
ւէտս ինձ և մերձաւորաց իմոց. քանզի
ամենակարող ես. և ոչ երկբայիմ վասն հա-
ճութեան, զի ամենաբարի ես. Բայց ոհ,
զի զոր արարածք ամենայն 'ի յերկինս և 'ի յեր-
կրի ոչ երբէք ըստ արժանւոյն փառաբա-



նել

նել բաւեն, զի արդ ես եղկելիս անար
ժանապէս և անպատրաստապէս իշխեցից
աղերսել վասն անթուելի մեղաց իմոց։
Ցաւիմ իրաւի սրտի մտօք. զի երբեմն
բարկացուցի զքեզ Տէր իմ ամենաբարի,
զոր պարտէր ինձ գովել սիրել և յարգել՛ի
վեր քան զամ ինչ։ Այլ դու արժանի ա-
րա զիս ողորմութե քով, և մաքրեա զիս
պատուական արեամբն յն քի որդւոյ քոյ
և փրկչին իմոյ յամ անօրէնութեց իմոց.
և յամ ունայն վնասակար և օտար խորհր
դոց ազատեա զսիրտ իմ. զի հոգւով և
ճշմարտութե քեզ երկրպագանելոյ և զքեզ
գովելոյ կարօղ լինիցիմ. և զոր խոնարհ որ
տիւ յամբաւ բարերարութե քումմէ խնդ-
րելոց եմ ընդունիցիմ. և զայս ըստ բարե
հաճութե մարդասէր կամաց քոց. որում
ամ յօժարութե հնազանդիմ։ Բայց զի
արդ ծառայս անպիտան գտցէ զշնորհս
առաջի երեսաց քոց. նայեաց ով հայր բա
րեգութ յերեսս օծելոյ քոյ ընդ որ հաճե
ցար. յորոյ անունն խոնարհաբար աղաչեմ
զքեզ. զի մարդասիրապէս լուիցես ինձ։
Ահա զջերմեռանդս նորին աղօթս, զբարե
պաշտ իղձս. զսրբազան ցանկունս, զամենա
սբ խորհուրդս, զբանս զգործս և զամ ար
դիւնս կենաց չարչարանաց և մահու նորին
մատուցանեմ քեզ. զի կատարելութե և
միաւո

միաւորութե՛ նոցին ընտանիցին համայնք
պակասութիւնք իմ. և 'ի ձեռն նր՛ իբրև 'ի
ձեռն միջնորդի և բարեխօսին մերոյ հա
ճոյ լիցի քեզ ո՛վ հայր յաւիտենական պաշ
տօնս այս ծառայութե՛ իմոյ: Նաև երանի
թե ըստ սրտի ըստ նախանձու և ըստ ջեր
մեռանդութե՛ ամէն օրհնեալ մօրն և կոյ
սին մարիամու, և սրբոց հրեշտակապետաց
և հրեշտակաց, և ա՛մ հոգւոց երանելեաց
զքեզ պաշտել զքեզ սիրել և զքեզ օրհնա
բանել կարիցեմ: Նաև զայս այսու դիտա
ւորութե՛ զի 'ի բաց բառնայցես յինէն որ
ինչ անհաճոյ գտանիցի 'ի յիս: Զանկատա
րութիւնս իմ տեսանելն աչք քո ո՛վ քննօղդ
սրտից, ուստի զշնորհս և զառաքինութիւնս
ինձ հարկաւորս մարդասիրապէս պարգև
իցես. ո՛վ զի յառաջ քան զկոչումն իմ յա
ւէտ արժանապէս ծառայիցեմ քեզ: Նաև
զա՛մ 'ի մեծագոյն փառս անուան քոյ սըր
բոյ. 'ի կեցութի՛ հոգւոյ իմոյ և բնաւ ից
մերձաւորաց իմոց. 'ի մխիթարութի՛ հա
նուրց ննջեցելոց քրիստոնէից. և մանա
ւանդ որոց առանձնապէս պարտական
եմ: Զայսմ միայնում ա՛ր իմ յոյժ ցանկայ
անձն իմ, այսինքն ծառայելոյ հաճոյանա
լոյ և հաճելոյ 'ի քեզ այժմ և յաւիտեան.
քանզի դու ես ա՛ծ իմ և ա՛մ ինչ. և փա
փաքիմ մտերմաբար և ջերմեռանդ սրտիւ



քեզ

քեզ սաղմոսել և զքեզ գովաբանել. զօրա
ցո ուրեմն զիս շնորհիւ քով սրբազանիւ
առանց որոյ զոչ ինչ կարեմ առնել. և ու
ղիղ եղիցին աղօթք իմ ո՟պ զխունկ առաջի
քոյ Տր, ով Թագաւոր Թագաւորաց ամե
նաբարի ամենակարօղ և ամէնիմաստ. և
քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

[illegible]

## Հայր մեր որ յերկինս ես։

Որհնեալ ես Տծ և Հայր Տն մերոյ Յի
Քի, հայր գթութե և Տծ ամմխիթա
րութե. որ յառաջագոյն սահմանեցեր ըզ
մեզ յորդեգրութի 'ի ձեռն Յի Քի, որ մե
այն ունիս զանմահութի բնակեալ 'ի լոյս
անմատոյց, ուրախութբ գոհանամք զքէն,
որ կոչեցեր զմեզ 'ի մասն վիճակի սրբոցն
'ի լոյս, զի ոչ առաք զհոգին ծառայութե
միւսանգամ յերկիւղ, այլ առաք զհոգին
որդեգրութե որով աղաղակեմք աբբայ
հայր, նոյն ինքն հոգին վկայէ հոգւոյս
մերում եթէ իցեմք որդիք Այ. և եթէ որ
դիք, ապա և ժառանգք. ժառանգք Այ
և ժառանգակիցք Քի։

## Սբ եղիցի անուն քո։

Տուր զի լինիցիմք նմանօղք քեզ իբրև
որդիք սիրելիք, և իբրև զորդիս լու


սոյ

սոյ գնայցեմք ամ̃իւ բարութ̃բ արդարու
թ̃բ և ճշմարտութ̃բ, փորձելով զինչէ հա
ճոյ քեզ. և մի կցորդք լիցուք անպտղու
թե գործոցն խաւարին, զի մի՛ անուն քո
հայհոյեսցի 'ի մէջ հեթանոսաց: Արժանի՛
աւետարանին քի̃ գնասցուք. զի լինիցիմք
ամբիծք և անարատք որդիք քո. անմեղք
'ի մէջ կամակոր և խեղաթիւր ազգին իբրև
լուսաւորք աշխարհի զբանն կենաց ու
նելով յանձինս 'ի պարծանս քոյս յաւուրն
քի̃. գնալ մեզ արժանի տ̃ն յա̃մի հաճունե̃.
յա̃մ գործս բարութե̃ պտղաբերեալք, և ա
ճեցուցք գիտութ̃բն ա̃յ. շնորհեա՛ մեզ,
զի եթե ըմպիցեմք, և եթե զինչ և առնի
ցեմք զա̃մ ինչ 'ի փառս քոյս առնիցեմք:

Ե՛ կեսցէ արքայութի̃ քո:

Ա̃ծ զի մարմին և արիւն զարքայութի̃ն ա̃յ
ժառանգել ոչ կարեն. ուրեմն դնեմք
զծունր մեր առ քեզ հայր տ̃ն մերոյ յի̃
ք̃ի, զի տայցես մեզ ըստ մեծութե̃ փա
ռաց քոց հաստատիլ զօրութ̃բ 'ի ձեռն
հոգւոյդ քո 'ի ներքին մարդն, բնակել
ք̃ի հաւատով 'ի սիրտս մեր, զի մի թա
գաւորեսցեն մեղք 'ի մահկանացու մարմինս
մեր. Որ՛ան զի դու փրկեսցես զմեզ յիշխա
նութե̃ խաւարին, և փոխեսցես զմեզ յար
քայութի̃ որդւոյդ քո սիրեցելոյ. Ե՛ւ գի
տեմք եթէ երկրաւոր տաճար շինուած

դս մերոյ քաղաքացի. զշինուած յԱյ ու-
նիմք տաճար առանց ձեռագործի յաւի-
տենական յերկինս: Եւ որ չափ յամեմք
'ի մարմնի աստ օտարանամք 'ի Տնէ. Նմին
իրի ցանկամք ելանել աստի, և լինել ընդ
քին: Վս որոյ ոչ ձանձրանամք, այլ թէ
պէտ և արտաքին մարդս մեր ապականի,
այլ ներքին մարդն մեր նորոգի օր ըստ օրէ,
զի առ ժամանակեայ յաճախութի թեթ-
ևի նեղութեաս մերոյ զմեծութի փառացն
գործէ 'ի մեզ. քան զի ոչ դիտեմք զերևե-
լիս, այլ զաներևոյթսն. զի երևելիքս առ
ժամանակ մի են, և աներևոյթքն յաւի-
տենականք:

Եղիցին կամք քո որպ յերկինս.

Քանզի դու ես Տր որ յաջողես 'ի մեզ
զկամելն և զառնելն վս հաճութե քոյ:
Արդ արա զի լինիցիմք գիտութբ կա-
մաց քոց, ամ իմաստութբ և հոգևոր հան-
ճարով գնալ մեզ արժանի քեզ յամի հա-
ճութե. զի այս են կամք քո. սրբութի
մեր: Մի կերպարանիցուք կերպարանօք
աշխարհիս, այլ նորոգիցուք 'ի նորոգումն
մտաց մերոց առ 'ի քննել մեզ զլաւն. և ե-
թէ զինչ են կամքն Այ, բարին և հաճոյն
և կատարեալն, զի մերս առ բարին յոյժ
տկար է, զի ոչ եթէ անձամբք բաւականք
եմք խորհել զինչ իրք 'ի մէնջ, այլ բաւա
կանու

կանութիւն մեր յոյ է։ Տուր մեզ շնորհս քոյս զի զնոյն կատարեսցեմք սրտիւ իբրև պաշտօնեայք հոգիք քոյք հարկաւորք առաքելովք. ՚ի սպասաւորութիւն վս այնոցիկ որք ժառանգելոցեն զփրկութիւն։

Զհաց մեր հանապազորդ։

Շահականութիւն մեծ է ածպաշտութիւնս բաւականութեամբ հանդերձ, զի ոչինչ բերաք յաշխարհ, և ոչ տանիլ ինչ կարասցուք, այլ ունիմք զկերակուր և զհանդերձս, և այնու շատասցուք։ Բորդ բարք մերք անարծաթասէրք եղիցին. բաւական համարելով որ չափ ինչ ՚ի ձեռս իցէ. քանզի դու ես իսկ ասացեր ոչ թողից զքեզ. և ոչ ընդ վայր հարից, որպէս զի համարձակ լիցուք յասել, տր է իմ օգնական։ Մերձ ես տր մի ինչ հոգասցուք, այլ ամ ուրեք և յամի խնդամտութք լուալք գոհասցուք յագել և քաղցենալ. առաւելուլ և նուազիլ։ Իսկ նախ քան զամ կըրթեսցուք զանձինս մեր յածպաշտութե որ առ ամ ինչ օգտակար է, և զաւետիս կենաց ունի զարդիս և զհանդերձելոցն։ Տուր մեզ մի յուսալ ՚ի մեծութիւն անոտի, այլ ՚ի քեզ ած կենդանի, որ տաս մեզ զամ առատապէս ՚ի վայելել, զբարիս գործել, մեծանալ գործովք բարութե, առատս, սիրունս, հաղորդս լինել, գանձել անձանց



զհիմն

զՏէրն բարի 'ի հանդերձեալսն, զի բուռն հարկանիցեմք զկենացն յաւիտենականաց։ Կարօղ ես ած զամն շնորհս առաւելուլ 'ի մեզ, զի յամի յամ ժամ զամ բաւականութի ընկալեալք առաւելուցումք յամս գործս բարութե։ Եւ որ պարգեւես ըզ սերմն սերմանահանի, եւ զհաց 'ի կերակուր պարգեւեսցես։

Եւ թող մեզ զպարտիս մեր։

Մն զի ոչ բնակեալ է 'ի մարմնի մերում բարի ինչ, զի ոչ զոր կամիմք զբարին զայն առնեմք, այլ զորոչն կամիմք զչարն զայն գործեմք։ Եւ 'ի թագաւորելն մեղաց 'ի մահկանացու մարմինս մեր, հնազանդեցաք ցանկութեց նր։ Ո՛հ որքան պատրաստեցաք զանդամս մեր զէն անիրաւութե մեղաց, եւ զմեծութի քաղցրութե քո եւ ներողութե եւ երկայնմտութե արհամարհեցաք. ոչ ինչ հոգալով թէ քաղցրութի քո զմեզ յապաշխարութի ածիցէ, այլ ըստ խստութե մերում եւ ըստ անզեղջ սրտի գանձեմք անձին մերում զբարկութի յաւուր բարկութե, եւ յայտնութե արդար դատաւորութե քո, որ հատուցանես իւրաքանչիւրոց ըստ գործոց իւրեանց։ Բայց եկեսցէ ո՛վ հայր բազմագութ 'ի վերայ մեր ողորմութի քո, եւ յայտնի արարեալ զմեծութի փառաց քոց արա՛ զմեզ անօթս

անօթս ողորմութեն քո նախապատրաստե
ցեալս 'ի փառս քո, և ուր առաւելան
մեղքն, առաւել ևս յաւելցին շնորհքն։
Արդ հա՛ թողումք և զայլոց սպառնալիս, ո՟պ
զի զքեզ տ՟րդ մեր նեղող յերկինս ունի
ցիմք։ Դու ևս զգեցո մեզ իբրև ընտրե
ցելոց քոց զգութ ողորմութե, զքաղցրու
թի զխոնարհութի զհեզութի զերկայնմ
տութի, զի լիցուք ընդ միմեանս քաղ
ցունք. գթածք, շնորհելով միմեանց ո՟պ
և դու քին շնորհեցեր մեզ. ոչ ումեք չարի
զչար հատուցանելով. այլ եթէ հնար ինչ
իցէ մեզ. ընդ ա՟մ մարդկան զխաղաղու
թի ունելով. մի զանձանց վրէժ խնդրե
լով, այլ տացուք զտեղի բարկութե 'ի
քեզ թողլով զվրէժ խնդրութի. և մի՛
յաղթիցիմք 'ի չարէն, այլ յաղթեսցուք
բարեաւն չարին։ Արա՛ մեզ զհետ երթալ
խաղաղութե և շինութե որ առ միմեանս
է, և պահել զայն։

Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութի։

Յիշելով զտկարութիս մեր աղաչեմք ըզ
քեզ ո՛վ հայր ամենազօրութ, զի մի՛ փոր
ձութի ըմբռնիցէ զմեզ. բայց եթէ 'ի
մարդկանէ. մի՛ գուցէ ո՟պ օձն խաբեաց
զեւա խորամանկութե՟ն իւրով, այսպէս
ապականիցին միտք մեր և անկանիցին 'ի
միամտութէն որ է 'ի ք՟ս յ՟ս։ Հաւատարիմ

 են

եւս Տր, որ ոչ արկցես զմեզ 'ի փորձութն առաւել քան զկարն մեր. այլ արասցես ընդ փորձութե և զելս. զի համբերել կարասցուք:

## Այլ փրկեա զմեզ 'ի չարէ.

Այսու հետև հաստատեա զմեզ և պահեա 'ի չարէ. և խորտակեա զսատանայ ընդ ոտիւք մերովք մերձ ընդ մերձ. զի մի խաբեսցուք 'ի նմանէ. քան զի չեմք ինչ անտեղեակք խորհրդոցն. Տուր զի զգեցցուք զսպառազինութիւն քո, զի կարօղք լինիցիմք կալ ընդդէմ հնարից սատանայի. և 'ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութե. և զամ ինչ կատարել. զգեցեալ զզրահն հաւատոյ և սիրոյ. և զսաղաւարտն յուսոյ փրկութե. զի մի յանձինս ապաստանք լինիցիմք. այլ 'ի քեզ Տր: Որոյ վստահ եմք յայդ. թէ որ սկսաւ 'ի մեզ զգործս բարեաց, կատարեսցէ մինչև յօրն յի քի. Հաւատարիմ զքեզ գոլ հաւատամք որ խոստացար, զի որքան աւետիք քոյքեն, են այո և Ամէն.

## Մաղթանս աստուածածնութեան երկրորդութեանն.

Տր ողորմեա. Քս ողորմեա. Տր ողորմեա. Հայր երկնաւոր Ած, ողորմեա մեզ. Որդի փրկիչ աշխարհի Ած, ողորմեաց. Հոգիդ սբ Ած. ողորմեաց.



Սբ

Մի̃ երրորդութի̃ մի ա̃ծ. ողոր մեաց։
Ա̃ծ յորմէ. որով. և յորում են ա̃մք. ողոր։
Որ միայնդ ես ա̃ծ. ողոր մեաց։
Որ մովսեսի զանունքո, ես եմ որ էն յայտնեցեր. ողորմեաց։
Ա̃ծ աստուածոց տ̃ր. ողոր մեաց։
Ա̃ծ յորում կեամք շարժիմք և եմք. ողոր։
Տ̃ր ա̃ծ հզօր նախանձոտ հատուցանող զմեղս հարց յորդիս. ողորմեաց։
Որում միայնոյ վայելեն փառք և պատիւ. ողորմեաց։
Որոյ փառօք լի են երկինք և երկիր. ողոր։
Որ առնես զքանչելիս մեծամեծս միայն. ողորմեաց։
Տ̃ր բարձրեալ ՚ի վ̃ր ա̃մ երկրի. ողոր։
Որ միայն դես բարի. ողոր մեաց։
Ա̃ծ որոյ բարկութե̃ն ոչ ոք կարէ ընդդէմ կալ. ողորմեաց։
Որ եսդ որ էիր և որ գալոցես. ողորմե։
Ա̃ծ աբրահամու ա̃ծ իսահակայ և ա̃ծ յակոբայ. ողորմեաց։
Թագաւոր թագաւորաց և տ̃ր տերանց. ողորմեաց։
Որ նստուցանես զթագաւորս յաթոռս, և ածես զգօտի ընդ մէջ ն̃ց. ողորմեաց։
Որ միայն ունիս զանմահութի̃ բնակեալ ՚ի լոյս անմատոյց. ողորմեաց։
Տ̃ր զօրութե̃ց ա̃ծ իսրայէլի. ողորմեաց։

Ամենազօր ան̃ձ հոգւոց և ա̃մ մարմնոց· ողո՛
Որ արարեր զերկինս և զերկիր զծով և
զա̃մ որ է 'ի նս̃· ողորմեաց:
Որ առնես զիրաւունս զրկեցելոց և տաս
զհաց քաղցելոց· ողորմեաց:
Տ̃ր ողորմած երկայնամիտ բազումողորմ
և ճշմարիտ· ողորմեաց:
Տ̃ր դատաւոր արդար հզօր և երկայնա-
միտ, ողորմեաց:
Յորոյ ձեռին է շունչ ա̃մ կենդանեաց·
ողորմեաց:
Տ̃ր մեր հուր ծախիչ, ողոր    մեաց:
Տ̃ր հաւատարիմ յորում չիք անիրաւու-
թիւն արդար և ճշմարիտ, ողոր:
Տ̃ր քննօղ սրտից և փորձիչ երիկամանց· ողո՛
Որ բանաս զձեռն քո և լցուցանես զա̃մ
կենդանի օրհնութե̃բ քով· ողոր:
Որ մեծ ես խորհրդով և զօրաւոր գոր-
ծովք և անհասանելի մտաց, ողոր:
Որ առնես զմեծամեծս և զանքննելիս և
զհրաշակերտս որոց ո՛չ գոյ թիւ, ողոր:
Հայր որբոց և դատաւոր այրեաց· ողոր:
Որ արձակես զկապեալս և բանաս զաչս
կուրաց, ողորմեաց:
Որ մեծ ես, և իմաստութե̃ քոյ ո՛չ գոյ
թիւ, ողորմեաց:
Որ ընդունիս զհեղս և խոնարհեցուցանես
զամբարտաւանս մինչև յերկիր, ողորմեաց:

 Որպ

Որոյ աչք բացք են յամ ճանապարհս որդ-
ւոց մարդկան, ողոր։
Միայն օրէնսդիր և դատաւոր որ կարող
ես կորուսանել և կեցուցանել, ողորմեաց։
Որ բժշկես զբեկեալ սիրտս և պատես
զամ վէրս նց, ողորմեաց։
Տր մեռուցանող և տր կեցուցանող, ողոր։
Ած որ ոչ կամիս զանիրութի, ողորմեց։
Որ ունիս զիշխանութի զմարմին և զհոգի
արկանել 'ի գեհեան, ողորմեաց։
Տր որ հաստատես զլոյս և առնես զխա
ւար, ողորմեաց։
Որ սփռես զազգս և կորուսանես զնս և զկոր
ծանեցեալսն միւսանգամ հաստատես, ողո։
Որոյ աչք պայծառագոյնք են քան զարե
գակն և ամենահայեացք յամենայն ճանա
պարհս մարդկան, ողորմեաց։
Որ յայտնես զխորս խաւարի և հանես 'ի
լոյս զստուերս մահու, ողոր։
Ած առաջի որոյ ոչ է ակն առութի, ողոր։
Որ ըմբռնես զիմաստունս 'ի խորագիտու
թե իւրեանց և զխորհուրդս չարանիւթից
ցրուես, ողորմեաց։
Որ կենդանացուցանես զմեռեալս և կոչես
զչգոյն իբրև զգոյ, ողորմեաց։
Ած ամենայնի մարմնոյ որում ոչ է դժուա
րին ամենայն բան, ողորմեաց։
Որ արարեր զերկիր զօրութե քով և պատ

բաստեցեր զտիեզերս իմաստութ՟բ քով.
ողորմեաց:
Որ տաս զանձրեւս յերկիր եւ ոռոգանես
ջրով զամենայն. ողորմեաց.
Որ տաս զկերակուր ամենից մսեղեաց, ողո:
Որ զա՟մ ինչ վս՟ քոյ գործեցեր, ողորմե:
Որ կենդանի ես յաւիտեանս յաւիտենից,
ողորմեաց:
Որ զամենայն չափով եւ թուով եւ կշռով
կարգեցեր, ողորմեաց:
Զոր երկինք եւ երկնից երկինք տանել ոչ
են բաւական, ողորմեաց:
Ր.հեղ խորհրդով քան զամենայն որդիս
մարդկան, ողորմեաց:
Որոյ առաջի ոչ՟ մէտ մի 'ի նժարից կշռաց
է ամենայն աշխարհս. ողորմեաց:
Որ զամենայն յաջողես ըստ խորհրդոց կա
մաց քոց, ողորմեց:
Որ չափեցեր ափով քով զջուրս եւ զեր
կինս թզաւ ողորմեաց:
Որ տիրես զօրութ՟ց ծովու եւ զխռովու
թի ալեաց նր՟ ցածուցանես, ողորմեաց:
Որ չափես զերկիր քլաւ եւ կշռես զլե
րինս կշռով, ողորմեաց:
Ա՟ծ եւ տ՟ր մեծ եւ թագաւոր 'ի վերայ ա՟մ
կռոց, ողորմեաց:
Թագաւոր յաւիտենից անստեղծ աներեւ
ոյթ եւ միայն իմաստուն, ողորմեաց

Ս՜բ ս՜բ ս՜բ տ՜ր զօրութեանց, ողոր մեաց։
Ա՜ծ վերակացու մեր եւ վարձք մեր բա
զում յոյժ, ողորմեաց։
Մ՜ի ա՜ծ եւ հայր ամենեցուն որ ես 'ի վ՜ր ա՜մե
ն ընդ ամենեսին եւ յամենեսին 'ի մեզ, ողո։
Փրկիչ մեր լեր, ներեա՛ մեզ ո՛վ տ՜ր
երրորդութիւն։
Փրկիչ մեր լեր, եւ լուր մեզ ո՛վ տ՜ր եր։
Յամենայն չարէ․ ազատեա՛ զմեզ ո՛վ տ՜ր։
Յամենայն հպարտութենէ եւ 'ի մեծամտու
թենէ, ազատեա՛ զմեզ ո՛վ տ՜ր։
Յորկրամոլութենէ 'ի շուայտութենէ եւ յամենայն
որովայնամոլութենէ ազատեա՛ զմեզ ո՛վ տ՜ր։
'Ի բարկութենէ 'ի նախանձու եւ յամենայն
չարահաճութենէ ազատեա՛ զմեզ ո՛վ տ՜ր։
Յամենայն անառակութենէ եւ 'ի պղծութենէ,
ազատեա՛ զմեզ ո՛վ տ՜ր։
Յամենայն ծուլութենէ եւ յանպատեհ տրտ
մութենէ, ազատեա՛ զմեզ ո՛վ տ՜ր։
Վ՜ն անչափութեանց զօրութեան քո, ազա
տեա՛ զմեզ ո՛վ տ՜ր։
'Ի ձեռն անբաւ իմաստութեան քո, ազա
տեա՛ զմեզ ո՛վ տ՜ր։
'Ի ձեռն ամէն առատ բարութեան քո, ա-
զատեա՛ զմեզ ո՛վ տ՜ր։
'Ի ձեռն յաւիտենական փառաց եւ մեծու
թեան քո, ազատեա՛ զմեզ ո՛վ տ՜ր։
'Ի ձեռն բարձրութեան գիտութեան եւ նախախ

նամութեան քո, ազատեա՛ զմեզ ո՛վ Տէր։
Ի ձեռն անճառելի մեծութեան սիրոյ և
ողորմութեան քո, ազատեա՛ զմեզ ո՛վ Տէր։
Ի ձեռն անքննելի արդարութեան և դա
տաստանաց քոց, ազատեա՛ զմեզ ո՛վ Տէր։
Յաւուրն դատաստանի ազատեա՛ և փրկ
եա՛ զմեզ ո՛վ Տէր։

Մեղաւորքս զքեզ աղաչեմք լուր մեզ։
Զի քեզ ծառայեսցուք սրբութեամբ և ար
դարութեամբ զամենայն աւուրս կենաց մե
րոց, աղաչեմք զքեզ լուր մեզ։
Զի քեզ Տեառն Աստուծոյ մերում երկրպագանի
ցեմք և զքեզ միայն պաշտիցեմք, աղաչեմք
զքեզ լուր մեզ։
Զի մի երբէք զանուն քո Տէր ի վերայ սնո
տեաց առնուցումք, աղաչեմք զքեզ լուր։
Զի զտօնս և զաւուրս տէրունականս ե-
կեղեցւոյ կրօնաւորական վարուք և բա
րեպաշտութեամբ պատուիցեմք, աղաչեմք։
Զի զծնողս զառաջնորդս և զմեծաւորս
մեծարանօք և հնազանդութեամբ պատուե
ցեմք, աղաչեմք զքեզ։
Զի մի ուրուք վարուց համբաւոյ և պա
տուոյ վասն բարկութեան կամ վասն ատելութեան.
և կամ վասն նախանձու երբէք վնասիցեմք,
աղաչեմք զքեզ։
Զի մի ումեք զվնաս զգողութեան կամ զայլս
զրկանս դաւով կամ բռնութեամբ հասուցանի
ցեմք, զքեզ։



Զի

Որ ի զանիրաւս մեր յանպատեհ մարմնոյ ցան
կութեանց և յանմաքուր շարժմանց պահե
ցեմք, աղաչեմք զքեզ։
Որ ի մի երբեք ընդդէմ մերձաւորաց մերոց
զսուտ ինչ վկայիցեմք, աղաչեմք զքեզ։
Որ ի մի ընչից մերձաւորաց մերոց ցանկա
նայցեմք, աղաչեմք զքեզ։
Որ ի զքեզ ա͞ծդ մեր 'ի բոլոր սրտէ, և 'ի բո
վանդակ մտաց և յա͞մ զօրութենէ սիրիցեմք,
աղաչեմք զքեզ։
Որ ի զքեզ 'ի վեր քան զա͞մ, և զմերձաւո
րըս մեր վ͞ն քոյ իբրև զանձինս մեր սիրե
ցեմք, աղաչեմք զքեզ։
Որ ի զորինչ մեզ ոչ կամիմք լինել, այլում
մի առնիցեմք, աղաչեմք զքեզ։
Որ ի զամենայն շնորհս 'ի մեզ առատացու
ցանիցես, աղաչեմք զքեզ։
Որ ի մի զմեծութիւն քաղցրութեան համբե
րութեան և երկայնմտութեան քոյ անյարգե
ցեմք, աղաչեմք, զքեզ։
Որ ի պատրաստիցեմք զմարմինս մեր պա
տարագ կենդանի ի ս͞բ և հաճոյ ա͞յ, աղաչեմք։
Որ ի զմեզ յարքայութիւն քո ա͞ծ զոր պատ
րաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի վ͞րա
ծիցես, աղաչեմք զքեզ։
Գառն ա͞յ որ բառնաս զմեղս աշխարհի,
հաշտեցո ընդ մեզ զՀայրն երկնաւոր։
Գառն ա͞յ որ բառնաս զմեղս աշխարհի,
քաւեա՛ զմեզ զմեղաւորքս

Գառն ա՟յ որ բառնաս զմեղս աշխարհի, պարգևեա՛ մեզ զհոգին ս՟բ։

Ով երջանիկ ս՟բ երրորդութի՟ն լուր մեզ.

Ով երկրպագելի ս՟բ երրութի՟ն անսա մեզ։

Տ՟ր ողորմեաց, Ք՟ս ողորմեաց, Տ՟ր ողոր։

Օրհնեալ ես Տ՟ր ա՟ծ հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ յաւիտեան։

Օրհնեալ ես Տ՟ր ՚ի վ՟ր հաստատութե՟ն երկնից, գովեալ և փառաւորեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեսցեն զքեզ ամենայն հրեշտակք և ս՟բք քո, և գովեսցեն և փառաւորեսցեն ՚ի յաւիտեան։

Օրհնեսցեն զքեզ երկինք երկիր ծով և ամենայն որ է ՚ի նս՟. և գովեսցեն և փառաւորեսցեն ՚ի յաւիտեան։

Օրհնեսցուք զՀայր և զորդի ընդ սրբոյ հոգւոյն, գովեսցուք և առաւել բարձրացուսցուք զնա ՚ի յաւիտեան։

Տ՟ր լուր աղօթից իմոց և աղաղակ իմ առ քեզ եկեսցէ։

## Աղօթք առ սուրբ Երրորդութիւնն.

Ամենակարող մշտնջենաւոր ա՟ծ որ ետուր ծառայից քոց խոստովանութե՟բ ճշմարիտ հաւատոյն ճանաչել զփառս յաւիտենական երրորդութե՟դ, և զօրութե՟բ մեծութե՟ քո երկրպագանել միութե՟դ, աղաչեմք

զքեզ

զքեզ զի նոյնոյ հաւատոյ հաստատութիւ՟ն միշտ ամրանայցեմք յա՟մ հակառակութեանց։ Տէ՟ր Ա՟ծ որ զամենակարողութիւն քո ներելով յոյժ և ողորմելով յայտնես, բազմացո 'ի վ՟ր մեր զողորմութիւն քո ո՟չ զի առ խոստմունս քոյս ընթանալով հաղորդս արասցես զմեզ երկնայնոց բարեացդ։

Ա՟մենակարող մշտնջենաւոր Ա՟ծ որ առատութիւ՟ն գթութեան քո գերազանցես զարդիւնս և զուխտս պաղատողաց, հեղ 'ի վ՟ր մեր զողորմութիւն քո, զի թողցես զայնոսիկ յորոց խիղճ մտաց մերոց երկեաւ, և 'յաւելուցուս, զայն առ որ աղօթք մեր ո՛չ համարձակին.

## Յանձնարարութիւն առ սուրբ Երրորդութիւնն.

Ո՛վ ծայրագոյն անբաւազօր յաւիտենական ամենագութ երկրպագելի և անհասանելի ս՟բ երրորդութիւն և մի Ա՟ծութիւն, քեզ յանձն առնեմ և նուիրեմ զհոգի իմ և զա՟մ զօրութիւնս և զկարողութիւնս սորա, զա՟մ ընդունակութիւն կամաց իմոց առ 'ի սիրել զքեզ, և զամենայն տեսողութիւն մտաց իմոց առ 'ի ճանաչել զքեզ, և խոնարհութիւ՟ն անձին փառաւորել զքեզ։ Ներընծայեմ ևս և մատուցանեմ զա՟մ հնազանդելի կարողութիւն հոգւոյս իմոյ առ 'ի գործակից լինել շնորհի քում Ա՟ծային, և առ



'ի

լնուլ և կատարել զամ բարեհաճութիւն քոյս: Տր առաջի քո է ամ ցանկութիւն իմ, և հեծութիւն իմ ի քէն ոչ ծածկեցաւ. ընկալ ուրեմն զամենայն կարելի ցանկութիւն կամաց իմոց առ ի գովել զքեզ, հաճոյ լինել քեզ, և ծառայել քեզ:

Յանձն առնեմ ես քեզ զամ կիրս և ըզ շարժմունս մտաց իմոց, զխորհուրդ ըզ բանս և զգործս, զեղեալս և զապառնիս, զժամանակն իմ և զմշտնջենաւորութիւն իմ, իսկ և զբոլոր գոյն իմ թէ ըստ բնութեան և թէ ըստ շնորհի, իբրև անարգ և անպիտան ծառայ տրութեան քո ամենազօրի և բարերարի. և զօրութեամբ նուիրմանս իմոյ այսորիկ, այլ և շնորհիւ քով ածայնով ցանկամ և փափաքիմ յաւէտ զի ի քոյդ գոլոյ մի՛ սպառիցիմ և յողորմութենէ քումմէ մի՛ վրիպեցիմ:

Յանձնարարութիւն առ հայրն ած·

Ո՛վ ամենաբարեգութ հայր ողորմութեանց, և ած ամ մխիթարութեանց, թէպէտ անարժան և անարգ եմ ես, սակայն գոլով ստեղծուած քո մատչիմ խոնարհ դիմօք առ քեզ տրդ իմ և արարիչդ իմ բարերար. և վստահացեալ արդեանց սիրեցելոյ որդւոյ քո տն մերոյ յի քի աղերսանօք դիմեմ առ քեզ շնորհել քում երկնայնոյ

նայնոյ հաղորդել փափաքելով, զի նորին
օգնականութ՟ն 'ի յիւրաքանչիւրս խոր
հուրդս 'ի խօսս և 'ի գործս զիս ըստ հա
ճոյից կամաց քոց կառավարելոյ կարող լի
նիցիմ. և քեզ տ՟ն իմում զընդունելի
պաշտօն հարկաւոր ծառայութեսս իմում
մատուցանիցեմ։ Արդ հայր քաղցրագու
նեղ որ ես տուող և պահպանող ամենայնի,
զիս և զամենայն ինչ իմ բոլորովին քեզ մա
տուցանեմ 'ի յօժարամիտ ծառայութ՟ի և
'ի սպասաւորութ՟ի քո. և զայս միաւորու՟թ
նուիրմանն որդւոյ քոյ սիրեցելոյ տ՟ն մերոյ
յ՟ի ք՟ի որ դեռ ևս մանուկ գոլով զինքն
'ի տաճարին, և յետոյ աղօթելով 'ի պարտի
զին, և ապա մեռանելով 'ի վ՟ր սեղանոյ սը
բոյ խաչին քեզ ընծայեաց և յանձն արար։
Ամենաբարեգութ տ՟ծ քաւեա զիս զթշո
ւառական մեղաւորս, և զգործս ձեռաց
քոց մի անտես առներ. այլ նայեաց յե
րեսս ք՟ի քոյ զոր ետուր մեզ բարեխօս և
միջնորդ. նորին պատուականութ՟ին և ար
ժանաւորութ՟ին զիմ անարգութիս և ըզ
նուաստութիս հաւասարեսցէ, զի զորինչ
ինև ոչ կարեմ, նորին արդեամբք վերըն
դունիցիմ։ Ուրեմն վ՟ն անբաւ բարերա
րութ՟ն և մարդասիրութ՟ն քոյ վերընկալ
գթասիրաբար զայս դու զնաքեայ ծա
ռայութիւնս 'ի մեծագոյնս փառս անո

 ւան

ւանդ քոյ սրբոյ. և'ի փրկութիւն հոգւոյ իմոյ։

## Յանձնարարութիւն առ որդին Ած.

Ո՜ ամենաբարի և քաղցրագունեղ Տր մեր Յս Քս փրկիչ աշխարհի, թէպէտ մեղաւոր և անարժան եմ ես, սակայն գոլով փրկեցեալ պատուականաւ արեամբ քով դիմեմ խոնարհութբ մտաց և ջերմեռանդութբ սրտի առ քեզ Տր իմ և փրկիչդ իմ։ Եւ զի դու զքեզ բոլորովին վս փրկութն եղկելի մեղաւորիս 'ի վր սեղանոյ սրբոյ խաչին հօր քոյ 'ի գինս փրկանաց ընծայեցեր. ես ևս զիս ո՜վ ամենասիրելի Յս քեզ բոլորովին մատուցանեմ. զի՞նչ և իցեմ, զի որդ և լինելոցիցեմ. հանդերձ ամենայն զոր ունիմ, և զոր ունելոցեմ. Ընկալ աղաչեմ զքեզ Տր 'ի ձեռն անճառելի ողորմութն քոյ զհոգի և զմարմին իմ. զզգայութիս իմ զբանս իմ և զգործս իմ, և ուղղեա և կառավարեա զնս ըստ յամենայն պատճառաց մեղանչելոյ 'ի բաց փախիցիմ. և մի երբէք 'ի յորոգայթն ոգւոյն չարութն անկանիցիմ, այլ առ քեզ Տր իմ և փրկիչդ իմ և 'ի պատուիրանս քոյս մերձենայցեմ. ուր զի ոչ կեանք, ոչ մահ, և ոչ այլ ինչ դիպուած կարիցէ մեկնել զիս 'ի քէն։ Խնդրեմ ուրեմն 'ի քէն ո՜վ նազելի Յս զի վս սիրոյն որ զքեզ 'ի պատճառս փրկութն

թն մերոյ ՚ի ծոցոյ հօրն երկնաւորի առա յարգանտ կուսին. քարշեաց լցուցանիցես զանկատարութիւն գործոց իմոց որք ՚ի կողմանէ իմմէ սակաւագոյնք են և ոչ իմիք վարձու արժանիք, եթէ ոչ ՚ի լրութենէ քումմէ զկատարումն պակասութեան առնուցուն: Այսունեան աղերսեմ զանարժան ծառայութիւն իմ ընդ այնմ զոր արարեր և կրեցեր վս՟ անճառելի սիրոյ և հնազանդութեան քոյ. և ընդ մեծութեան բաւականութեանց քոց և արդեանցդ ընծայեալ զնա հօրն յաւիտենականին, որպէս զի յառատութենէ քումմէ մեծասցի աղքատութիւն իմ. և զոր ինչ յինէն ոչ ինչ կերպիւ արժանի եմ առնուլ, քոյով միջնորդութեամբ զայն ընդունիցիմ: Նաև աղաչեմ զքեզ քաղցր և բարի յս՟ վս՟ սրբոյ մարդեղութեանդ, վս՟ չարչարանաց և մահուան քոյ, և վս՟ այնմ զոր ՚ի պատճառս փրկութեան մերոյ արարեր, ողորմեա՛ց ծնողաց, եղբարց, քեռց, բարեկամաց. և բարերարաց իմոց կենդանեաց և ննջեցելոց. և հաղորդս արա՛ զնս՟ արդեանց սրբազանից տնօրէնութեանց քոց, զի օգնականութեամբ շնորհաց քոց զօրացեալք այնպէս զկենցաղս զայս անցուցանիցեն, որպ՟ զի ՚ի վախճանի զվարձս յաւիտենական կենացն ՚ի յերկինս ընդունիցին:

'ի բաց մերժելոց, և յետ հրաւիրելոյ և
քարշելոյ զիս առ քեզ, ո՛չ ես լքելոց զիս
'ի ճանապարհի· քանզի 'ի քեզ Տ՟ր յուսա-
ցեալ եմ, մի՛ ամաչեցից յաւիտեան, այս
յոյս հաստատեալ է 'ի ծոցի իմում, և
յա՟մ նեղութե՟ն հաստատէ զսիրտ իմ, զի
մի՛ նուաղեցից 'ի վիշտս իմ, քանզի հաւա-
տամ թէ փրկիչն իմ կենդանի է, և լցու-
ցանելոց է զիս ուրախութ՟բ երեսաց իւրոց
յորժամ մուծցէ զիս յարքայութ՟ի իւր։
Ո՛վ յոյս որ ո՛չ ամաչեցուցանես, յոյս այս
քան հատուցման, ո՛ որ չափ է մխիթա-
րութ՟ն աշխատութե՟ն։

## Ո տուն սիրոյ·

### Եղիցին կամք քո։

Ո՛վ քաղցրագունեղ Հայր· բոլորովին
զսէր քո 'ի սրտի իմում· զի այսպէս կա-
տարել՟ն

տարեալն զկամս քո, և հնազանդիլն պատո
ւիրանաց քոց ոչ եղիցի ծանր, քանզի սի
րողին ոչ ինչ է դժուարին. և ոչ ինչ ան
կարելի. զի զօրաւոր է սէրն իբրև զմահ,
և երանի թէ սովաւ լնանիւր և հալիւր
սիրտ իմ. քանզի աստուստ ծնանիւր և
սնանիւր 'ի մէջ քոյ և իմ նմանութիւն և միա
կամութիւն, և գոհութիւն զբարեհաճութեան
քում, և յօրէնս քոյս խորհէին կամք
իմ: Եւ զինչ յայտնագոյն նշան ճշմարտի
սիրոյ և բարեկամութեան առաւել քան զայս
ոչ ապաքէն որ ունի զպատուիրանս քո և
պահէ զնոսա, նա է որ սիրէ զքեզ. արդ
արև հաստատութիւն սիրոյ է կատարումն
գործոց:

Վասն ողջախոհութեան.

Ո հաց մեր հանապազորդ:

Ոի որպէս մարմին կերակրով, այսպէս
սիրտ ողջախոհութեամբ սնանի. և մանա
ւանդ, զի պարկեշտ և չափաւոր կերա
կուր հոգւոյ և մարմնոյ օգտակար է:
Արդ տուր ինձ զկարիս իմոց հեշտալեաց,
և 'ի կենցաղս կարևորս ուղիղ բանականու
թեան սանձիւք կառավարիլ. զի միշտ գուցէ
շուայտութեամբ և հոգւք որովայնի ծանրա
նայցէ սիրտ իմ. և այսպէս մարմինն եղ
ծանելի 'ի հեշտութիւն ընկղմեալ ծանար

 ցուցանիցէ

ցուցանիցէ զմիտս որ զերկնայինսն խորհի։ Եւ իրաւի զայս հանապազորդեան կերակուրս խնդրեմ, կերակուրն հեշտութեան թերևս, 'ի ներքոյ ամ̃ էակաց զորս վայելեմք զօրհանապազ, ծածկեալ կայ. և մեզ յամ̃ ուրեք դարանակալ լինի։

Ստան արփարա–ընեան·

Եւ թող մեզ զպարտիս մեր։

Արդարութիւն է հատուցանելն իւրաքանչիւր ումեք զիւրն, և զինչ պարտիմք մեք մերձաւորաց մերոց, եթէ ոչ զմիմեանս սիրել, և զմիմեանց բեռն բառնալ, և այս պէս կատարեմք զօրէնս քո. և զոր ինչ կամիմք զի արասցեն մեզ, զնոյն արասցուք և մեք այլոց. Արդարութիւն է ևս, զի որք զտասն հազար քանքարից պարտիս շնորհիլ մեզ 'ի քէն խնդրեմք, զհարիւր դահեկանից պարտիս թողլոյ ընկերին մերում մի հրաժարեսցիմք. Արդ այսպիսի արդարութեան զնախանձն և զսէրն տուր ինձ տէր, զի մի անտես արարեալ զդա անկանիցիմ 'ի ձեռս արդարութեան քոյ, քանզի եթէ մարդ մարդոյ բնութենակցի խնդրեան ոչ ներիցէ, զի արդ կարասցէ ակն ունել 'ի քէն ողորմութեան, ոչ ապաքէն արդարութիւն է, զի որով չափով չափեսցէ չափիցի նմա։

## Վասն արիութեան.

Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն։

Ի ներքոյ բազում փորձութեանց ստոր անկեալ է կեանք մարդոյ, և մանաւանդ զի բնաւին նոյն ինքն փորձութիւն է. Արդ առաքինութիւն արիութեան հաստատեա ըզ սիրտ իմ, զի ոչ զհետ յաջողմանց միտեցեմ, և ոչ 'ի ներհակաց յաղթահարեցիմ, և որոշեցիմ 'ի քէն. քանզի տեսանես, թէ զինչ է զօրութիւն իմ, զի ընդ իմանալ կարեցեմ, մանաւանդ, զի զօրութիւն իմ և փրկութիւն իմ դու ես տր, արդ ողորմեաց ինձ զի հիւանդ եմ ես, և հզօրք խնդրեցին զանձն իմ։ Եւ երանի թէ դու որ հզօրագոյն ես քան զամ և կարող 'ի պատերազմի ինձ 'ի թիկունս հասանէիր, և այսպէս ոչ երկնչէր սիրտ իմ, զի դու ընդ իս լինէիր. Եթէ ած 'ի մեր կոյս է, ով իցէ մեզ հակառակ. քանզի ոչ արկցես զմեզ 'ի փորձութիւն առաւել քան զկարն մեր, այլ տաս ընդ փորձութեան և զելս։

## Վասն խոհեմութեան.

Այլ փրկեա զմեզ 'ի չարէ։

Դիւրաւ զերծանի յամ չարէ, զոր խոհեմութիւն կառավարէ, որ է ուղիղ քան առնելեացն։ Արդ տուր ինձ տր զառաքինութիւն զայս, զի զոր ինչ առնեմ



խոհեմա

խոհեմաբար առնիցեմ. և 'ի կատարածն
ամի նկատիցեմ. քան զի ուր խոհեմութի
իշխէ, չարն ևս գործակից լինի 'ի բարիսն.
իսկ ուր ո՛չ է, և առաքինութիքն դառ-
նան 'ի մոլութի, և բարիքն փոխարկին 'ի
չարութի: Արդ արա՛ զի մի նման կուրին
անխոհեմաբար ընթացողին գլորեցիմ և
անկանիցիմ 'ի չարն. այլ արտևանունք իմ
առաջնորդիցեն գնացից իմոց: Տուր ինձ
զմիամտութի աղաւնոյ. բայց նախ զխորա
գիտութի օձի, զի ոպ սա զչարն վնասից
գլխոյ դարձուցանէ յառաջադրութե մար
մնոյ իւրոյ, այսպէս ես զմարմին իմ և
զանդամս իմ առաւել մատնիցեմ 'ի տան
ջանս, քան թէ հոգւոյ զվնաս ինչ բերի
ցեմ. որ է չարագոյն:

Մաղթանք յաղագս [illegible]

Տր ողորմեա: Քս ողորմեա, Տր ողոր:
Քս լուր մեզ: Քս անսա՛ մեզ:
Հայր երկնաւոր ած, ողորմեա մեզ:
Որդի փրկիչ աշխարհի ած, ողորմեա:
Հոգիդ սբ ած, ողորմեա մեզ:
Մի երրորդութի մի ած, ողորմեա մեզ:
Որ զնախաստեղծսն 'ի սկզբնական արդա
րութե և յանմեղութե ստեղծեր, ողոր:
Որ նայեցար 'ի յաբէլ երևելի ածպաշտու
թէ

թե̃ մատուցանողն պատարագաց, ողոր․
Որ զնոյ 'ի մէջ չարագործաց արդար գը
տեալ 'ի ջրհեղեղէն ապրեցուցեր, ողոր․
Որ զղովտ և զաբրահամ հիւրասիրութե̃
հռչակեալսն երևելիս արարեր, ողորմեաց․
Որ զաբրահամ հնազանդութե̃ և հաւա
տով զարդարեցեր, ողորմեաց մեզ․
Որ զյակոբ համբերութե̃ և յուսով զօրա
ցուցեր, ողորմեաց մեզ․
Որ յովսէփայ զհամեստութի̃ և զողջախո
հութի̃ պարգևեցեր, ողորմեաց մեզ․
Որ զմովսէս այր հեզագոյն և հաւատա
րիմ տան քոյ քարոզեցեր, ողորմեաց մեզ․
Որ զսամուէլ արդարասէր և աղաւ 'ի
կռապաշտութե̃ ժողովրդեան քում դա
տաւոր կարգեցեր, ողորմեաց մեզ․
Որ զդաւիթ արքայ արդարութե̃ և հե
զութե̃ բարձրացուցեր, ողորմեաց մեզ․
Որ զսողոմոն իմաստութե̃ պայծառացու
ցեր, ողորմեաց մեզ․
Որ զտուբիթ համբերութե̃ և ողորմած
ութե̃ զարդարեցեր, ողորմեաց մեզ․
Որ զյուդիթ ողջախոհութե̃ և աղօթից
վստահութե̃ հռչակեցեր, ողորմեաց մեզ․
Որ զյոբ ետուր մեզ օրինակ համբերու
թե̃, ողորմեաց մեզ․
Որ զեղիա նախանձու օրինաց սպառազի
նեցեր, ողորմեաց մեզ․


Որ

Որ զերկիս մանկունսն վ՟ն խոստովանութե՟
ճշմարտի ա՟ծ պաշտութե՟ ՚ի հրոյն փրկե
ցեր, ողորմեայ մեզ։
Որ զմանկաբայեցիս սիրով ճշմարիտ օրի
նաց զինեցեր, ողորմեա մեզ։
Որ զամենամբ կոյսն մարիամ յա՟մ մեղաց
ազատն ՚ի մայրութի քո ընտրեցեր, ողոր։
Որ զծերունին սիմէոն գալստեամբ քով
զուարճացուցեր, ողորմեայ մեզ։
Որ զաննա դուստր փանուէլի տեսութե՟
քով մխիթարեցեր, ողորմեայ մեզ։
Որ զերկիս մոգսն առաջնորդութե՟ աս
տեղն լուսաւորեցեր, ողորմեայ մեզ։
Որ զովհաննէս խստակրօն վարուք և
ժուժկալութե՟ ապաշխարութե՟ քարոզ
առաքեցեր, ողորմեայ մեզ։
Որ զյոհաննէս սիրոյ քոյ ա՟ծայնոյ արժա
նի արարեր, ողորմեայ մեզ։
Որ քանանացւոյն զհաւատն գովեցեր, ող։
Որ զխոնարհութի մաքսաւորին գովաբա
նեցեր, ողորմեայ մեզ։
Որ զսիրտս առաքելոց հրով հոգւոյն սըր
բոյ ՚ի սէր քո հաստատեցեր, ողորմեայ։
Քաւիչ լեր ներեա՛ մեզ տ՟ր։
Քաւիչ լեր ազատեա՛ զմեզ տ՟ր։
Զի զգաստութե՟ և արդարութե՟ կեց
ցուք յայսմ աշխարհի․ զքեզ աղաչեմք
լուր մեզ։

 Զի

Զի գործեսցուք զբարիս մինչ դեռ ժա-
մանակն 'ի ձեռին մերում է, զքեզ աղա:
Զի արժանի շրջիցիմք կոչմամբն յոր կո-
չեցաք, զքեզ:
Զի սիրով պահեսցուք զմիաբանութի՛ն
հոգւոյն յօդիւ խաղաղութե՛, զքեզ աղա:
Զի լիցուք արարողք բանի և ոչ լսողք
միայն, զքեզ:
Զի մի՛ ումեք զչար փոխանակ չարի հա-
տուցուք, զքեզ:
Զի զբարիս գործել մի ձանձրասցուք,
զքեզ աղա:
Զի ուրախ լիցուք 'ի տ̃ր յա̃մ ժամ, զքեզ:
Զի զա̃մ զոր ինչ առնեմք 'ի փառս ա̃յ
արասցուք, զքեզ:
Գառն ա̃յ որ բառնաս զմեղս աշխարհի,
յաւել 'ի մեզ զհաւատս:
Գառն ա̃յ որ բառնաս զմեղս աշխարհի,
հեղ 'ի մեզ զյոյս հաստատուն:
Գառն ա̃յ որ բառնաս զմեղս աշխարհի,
բորբոքեա՛ 'ի մեզ զսէր քո ս̃բ:
Ք̃ս լուր մեզ: Ք̃ս անսա՛ մեզ:
Տ̃ր ողորմեա: Ք̃ս ողորմեաց: Տ̃ր ողոր:

Աղօթք վասն խոնարհութեան և համբերութեան.

Տ̃ր ա̃ծ որ հակառակ ես ամբարտաւա-
նից և տաս զշնորհս խոնարհաց շնոր-
հեա՛ մեզ ճշմարիտ խոնարհութե՛ զառա-

քինութեն· զորոյ կերպարանն յանձին իւ-
րում միածինն քո եթող հաւատացելոց·
զի մի երբէք մեծամտեալք զքեզ 'ի բար-
կութեն շարժիցեմք· այլ խոնարհեալք 'ի
փառս անուան քոյ սրբոյ զպարգեւս շնոր-
հաց քոց ընդունիցիմք։ Տր ած որ միած-
նի որդւոյ քոյ համբերութեն զհպարտու-
թեն հին թշնամւոյն փշրեցեր· տուր մեզ
աղաչեմք զքեզ, զի որում նա գթածա-
բար վս մեր համբերեաց· զնոյն մեք ար-
ժանապէս յիշելով ըստ օրինակի նորին
ամենից ընդդիմամարտութեց ըմբերեսցուք։
Ած որ արդարացուցանես զամբարիշտն,
եւ ոչ կամիս զմահ մեղաւորին· խոնարհա-
բար աղաչեմք զմեծ վայելչութեն փառաց
քոց, զի մեզ զծառայս քո ապաւինեալս
'ի յողորմութեն քո մարդասիրապէս պաշտ-
պանիցես, եւ անսպառ հովանաւորութե
պահիցես ամ զի յասպարիզի առաքինու-
թեց անձանձիր ընթացեալք ընկալցուք
զբրաբիոնն յաղթութեն·. եւ մի իւիք փոր-
ձութե 'իքէն որոշիցիմք· տր մերով յիւ
քիւ, Ամէն։

Կենդանեան Հաւատոյ.

Հաւատամ քեզ ով Ճշմարտութեն բարու-
թեն եւ կամք, աստ եւ ամ ուրեք լինձ մեր
ձակայ· հաւատամ ամ գրեցելոց, գործե-

ցելոց, և'ի քէն աստացելոց 'ի վարժութեան ան
ձին իմոյ. խոստովանիմ առաջի ատենի
քոյ զբնաւս գոլ ճշմարիտս, և ջանամ
գործով ցուցանել զնոյնս 'ի ձեռն շնոր
հաց քոց: Դու տէր ամենակարող, ամէն
իմաստ, և ամենաբարի զտէր ինչ յառաջա
դրես ինձ 'ի կեցութի հոգւոյ իմոյ, և ես
հող և մոխիր զի՞ արդ ոչ հաւատացից, և
զվկայութիս բարեհաճութեց քոց ոմ̄ ոչ
ընկալայց. եթէ 'ի բանականութի հայիմ,
ստոյգ ես. եթէ 'ի յիմաստութիս և 'ի բնու
թիս իրաց ակնարկեմ, ճշմարիտ ես. իսկ
եթէ տրամադրեցեմ զունկն իմ 'ի լուր բա
նից քոց, լոյս ես և հաստատութի աներկ
բայելի: Որանի թէ յամ ժամ քեզ լը
ւեալէի, և ոչ երբէք զայրացուցեալ: Որա
նի թէ 'ի կեանս իմ զքեզ պատուէի, և
համբերութբ ցուցանէի զհաւատն իմ:
Բայց յայսմ հետէ հաւատացից յաւիտ
եան, և սիրեցից զքեզ գործով և ճշմարտ
ութբ: Որա՛ ընդրիս զոր կամիս, և ես գե
տելով զհաճութի քո կատարեցից. և զոր
ինչ յայտնեցեր ինձ վսն փրկութե իմոյ,
սիրով ընկալայց. ով կեանք իմ և տէր բա
րութի իմ:

Ա[illegible] յ[illegible].

Դու գիտես տէր իմ դու գիտես, զի ոչ


եմք

եմք բաւական առնել զինչ 'ի մէնջ ոպ՟ 'ի
մէնջ. վ՟ս որոյ հեզութ՟բ առ քեզ դիմեմ,
ոպ՟ զի քև և համբարութ՟բ և մխիթարու
թ՟բ գրոց սրբոց, ունիցիմ զյոյս, և 'ի քեզ
յուսացեալ մի ամաչիցեմ. վ՟ անզի ով
բարութ՟ի իմ, դու կոչեցեր զիս առ քեզ,
մի' ուրեմն 'ի բաց մերժիցես. դու հրա
ւիրեցեր զիս հետևիլ քում բարեհաճու
թ՟ե, մի' ուրեմն լքիցես զիս 'ի ճանապար
հի. և թէպէտ գտանեմ զայլ օրէնս յան
դամս իմ հակառակ օրինաց մտաց իմոց,
և ո՛չ եմ արժանի շնորհի քում, բայց որ
ետուր ինձ զմարմին և զարիւն քո տ՟ր 'ի
փրկանս, և զքեզ այսօր պատրաստես տալ
առ հաւատչեայ կեցութ՟ե հոգւոյ իմոյ,
և որ այսքան բարութ՟եց զիս նախաժամա
նեցուցեր, տուր ևս զոր խնդրեմն 'ի բա
րեգթութ՟եէ քումմէ, այսինքն զի բոլորով
սրտիւ յուսայցեմ 'ի քեզ. թէ մերժիցես
զիս, և թէ հեռացիցես զիս, թէ մատնիցես
զիս թշուառութ՟եց, և թէ գանից և տան
ջանաց, սակայն 'ի յուսալոյ 'ի քեզ մի՛ վեր
ջանայցեմ. զի դու ես բաժին իմ տ՟ր, ե
զիցի ինձ միշտ պահել զօրէնս քոյս, և առ
ո՛ երանութայց 'ի քէն ով բարի յ՟ս, որով հետև
ունիս զբանս կենացն յաւիտենից։

 Արթու

## Առաքինութեան սիրոյ։

Տէր իմ ա͞ծ, տուր ինձ զիմացումն զի ուսայց զպատուիրանս քո, և խօսեաց ընդ իս զհարդ և կամիս, թէ 'ի ձեռն գըրոց, և թէ միջնորդութ͞ե ստեղծուածոց, քան զի զոր ինչ 'ի փրկութիւն իմ ուսանիլ կամիմ, դու զնոյնս մերձ գոլով ընտանեբար և սիրով ուսուցանես։ Եւ զի արդ համարձակիմ ես ասել զայս, որ ո՛չ ինչ եմ առաջի քո, և մի թէ դու բարեաց իմոց կարօտ ինչ իցես զի այսքան սիրով կանխես առ իս. քաւլիցի, այլ զի դու այնպէս սիրեցեր զաշխարհ, մինչ զի զորդիդ քո միածին ետուր, և զի արդ կարեն ինձ ծանուցք լինիլ պատուիրանք և խորհուրդք քո, ուրեմն սիրեցից զքեզ ը͞ր զօրութիւն իմ, զի առ քեզ մերձենալ ինձ բարի է։ Արդ զինչ կարա ցէ զիս մեկնել 'ի սիրոյ քումմէ, նեղութիւն թէ անձկութիւն սով թէ մերկութիւն, վտանգ թէ հալածանք, Ջուրք բազումք ոչ կարասցեն շիջուցանել զսէր քո, զոր եկիր արկանել յերկիր, և կամեցար զի յոյժ բորբոքիցի։

## Առաքինութեան խոնարհութեան.

Ուսանիլ ինձ հրամայես 'ի քէն վարդապետ բարի, լինիլ հեզ և խոնարհ սր



տիւ,

տիւ, և զիարդ կարացից ես, առնել զայդ, որ ոչ ինչ եմ, և սոսկ գոլոյի երկրի թարց քոյոց օգնութեց, ոչ գիտեմ թէ արդեօք սիրոյ իցեմ արժանի թէ ատելութե, և եթէ ասիցեմ սիրոյ· զանձն իմ տգիտաբար խաբեմ· զի ոչ ինչ ունիմ զոր ոչ իցեմ առեալ ՚ի քէն և եթէ ա̃մ ինչ քո է, առ ինչ մեծամտեցայց։ Ա̃մ տուրք բարիք և ա̃մ պարգևք կատարեալք ՚ի վերուստ են իջեալք ՚ի հօրէն լուսոյ. և ա̃մ չարիք յինէն. զի ոչ եմ բաւական առնել զինչ յինէն, այլ բաւականութի իմ ՚ի ա̃նէ է. և զա̃մ գործս իմ ինքն գործէ յիս։ Արդ մի թէ պարծիլ կարիցէ տապարն առաջի հատանողին, զի և ես պարծիցիմ առաջի եռամեծի ա̃ծութեդ որ բարձրացուցանես զխոնարհս և ցրուես զամբարտաւանս։ Աստուստ ցանկամ միայն շնորհիւ քով բազմիլ ընդ քեզ, և ունիլ զյետին տեղի, զի մի տայցեմ զառիթ տրտնջման, և ոչ ումեք նախանձիմ, զի ՚ի քէն, և ՚ի քեզ, և քև է ա̃մ բարութի ա̃ծ սրտի իմոյ։

## Կ[illegible]

Թագաւոր թագաւորաց և տէր տերանց. որ առիս աստ մերձ ես, և ա̃մ ուրեք զիս պահպանես զի արդ հեռացայց ՚ի քաղցրութեէ քումմէ, և զիա̃րդ հրաժարե- ցայց

ցայց յերանութե՛ և յարքայութե՛ քումդ,
կամ ոչ հաճեցայց բաղձել ընդ քեզ ով
Ճշմարտութի, որ ասացեր, թէ երանի
աղքատաց հոգւով զի նոցա է արքայութի՛ն
երկնից. Արդ դու զաղքատս աշխարհիս
այսօրիկ ընտրեցեր, և բաղձանաց նոցին
սովոր ես լսել. խնայեա՛ ուրեմն ինձ և քար
շեա՛ զսիրտ իմ առ քեզ. զի ահա ճշմար
տիւ հրաժարիմ յամէ վս քո 'ի փոքունց
և 'ի մեծամեծաց. զի կարիցեմ երբեմն ա
սել, ահաւասիկ մեք թողաք զամ և եկաք
զկնի քո. արդ զինչ եղիցի մեզ: Արդարև
ոչ ինչ մեծագոյն գանձ յերկինս քան ըզ
քեզ ով սիրելի յս. որում ցանկայ և փա
փաքի սիրտ իմ յամ զօրութե իւրմէ:
Մերկ ելի յորովայնէ մօր իմոյ և մերկ
դարձայց անդր, մերկ զհետ քո գալ փա
փաքիմ վաճառելով զամ, զի 'ի քեզ հա
րիւրապատիկ գտից զաւիտենականն:

Աղօթք ի՛ն հնազանդութեան.

Խոնարհեցար տր իմ և թագաւորիմ յս
քս գոլով հնազանդ մահու խաչի, զի
և ես ուսանիցիմ 'ի քէն գոլ հեզ և խոնարհ
սրտիւ. արդ եթէ դու զիս հրաւիրես,
զիա՛րդ ոչ եկից ես զկնի քո. և եթէ դու
հրամայես ասելով, որ ձեզ լսէ ինձ լսէ,
և որ զձեզ անարգէ զիս անարգէ, զի արդ


ես

ես ոչ լուայց քեզ։ Ընկեց զհետ քո ճշ-
մարտապէս օգնութեան շնորհաց քոց. զի
լաւ է ունկն դրութիւն քան զզոհ ընտիր.
և հնազանդութիւն քան զճարպ խոյոց. քան
զի ընդդիմանալն է իբրև զմեղս հմայելոյ.
և ոչ կամելն անսալ, որպէս զանօրէնութիւն կռա-
պաշտութեան։ Ա՟ս որոյ շնորհիւ քով հնա-
զանդ եղէց ամ՟ ստեղծուածոյ վն՟ քո. և
առաւել մեծաւորաց իմոց բարեաց և
տմարդից. և կամաւ զպատարագ մատու-
ցից քեզ, որ պատարագեցար վն՟ մեղաց
իմոց. և պատժեցար վն՟ անօրէնութեանց ի-
մոց։ Ու ոչ որոնեցից թէ զիա՛րդ կամ
վն՟ էր հրամայես ինձ, զի դու ես իմաստու-
թիւն յաւիտենական, և ես մանուկ տգէտ
մտից և ելից իմոց։ Դու ես բարութիւն ան-
հուն. և միշտ վն՟ իմ հոգաս, որպէս թէ միայ-
նակ իցեմ. և գիտեմ զի այր հնազանդ խօ-
սեսցի զյաղթութիւնս։ Արդ զինչ է տր՟
յն՟ փրկիչ իմ. զինչ կամիս թէ արարից.
պատրաստ է սիրտ իմ. տուր զոր հրամայ-
ես, և հրամայեա զոր կամիս. քան զի առ-
նել զկամս քո ա՟ծ իմ կամեցայ. և զօրէնս
քո ՚ի մէջ որովայնի իմոյ։

## Սրբութեան ուղղափառութեան.

Որդի կուսածին յն՟ Քս՟ բաղձալի հոգ-
ւոյս իմոյ, որոյ աչք ՚ի յիս հայեին յամ՟
տեղիս.

տեղիս. Երանի որք սուրբք են սրտիւք. արդարև հրանելիք են զի նք զքեզ տեսցեն. այս է միայն ուխտ իմ, և ամ ցանկութիւն իմ: Ուայ 'ի ժողովողէն քումմէ որ ասէ, թէ որ սիրէ զսրբութիւն սրտի, վս շնորհի շրթանց իւրոց, ունիցի զթագաւոր բարեկամ, նմին իրի ես սիրեմ զզնա, զի դու տր իմ լինիցիս ինձ բարեկամ. որ ետուր ինձ զշնորհս իմանալոյ զբան, զոր ոչ իմանան ամենեքեան, այսինքն պահել զկուսութիւն, և լինիլ իբրև զհրեշտակս այ. Հոգալ միայն զայս իմոյ. զի հոգի իմ բոլորովին գեղեցիկ և անարատ արժանի լիցի երբեմն լսելոյ. զձայն փեսային. Եկ' 'ի Լիբանանէ քոյր իմ հարսն. Եկ' զի պսակեսցիս: Բայց գիտեմ զի ոչ կարեմ այլապէս լինիլ ժուժկալ եթէ ոչ դու ած իմ տայցես ինձ զնոյն. աղաչեմ զքեզ վս գթոյ ողորմութեն քոյ պահեա զանձն իմ. և զգուշացո զիս 'ի պատճառաց և 'ի կենցաղավարութեց վնասաբերից. զի զերծայց 'ի հրոյն յայնմանէ որ կլանէ մինչև 'ի սպառ. և բորբոքեա 'ի յիս զհուր սիրոյ քոյ ըստ այնմ որ կամիս:

Նորին առ Հոգին սբ վս մաղթելոյ շնորհս մաքրութեան

Ոգեդ ած քաղցրահայ եւայց.
Նախախնամող տեսչդ բայց.

 տուող

տուող բարեաց և պարգ եւաց·
մխիթարիչ թախծեալ ան ձանց:
Ծագեա՛ 'ի մեզ ըզ լոյս շնոր հաց·
և փարատեա՛ զխաւար մտաց·
ըզ մեզ մաքրեա՛ յաղտոյ մե ղաց·
տաճար կազմեա՛ ծնդ փա ռաց:
Ո մեզ ամրացո ընդդէմ դե ւաց·
տուր զյաղթութիւն 'ի թշնա մեաց·
լեր ապաւէն յաւուր չա րեաց·
տուր ընթանալ զհետ քոյ շաւ ղաց:
Սաւեա՛ զսէր մր բաղձա նաց·
և ընդ նմին զսէր ընկե րաց·
տուր հետեւիլ գործոց բա րեաց·
զօրս կատարել առանց մե ղաց:
Յորժամ հասցէ զըրաւ կե նաց·
զերծո՛ զմեզ յայսոց չա րաց·
փոխեա՛ 'ի յարկս երանե լեացդ·
օրհնել զքեզ ընդ էակ ցացդ:
Ամէն:



## Յաւուր Հինգշաբաթու.

### Յաղագս հաղորդութեան մարմնոյ և արեան տն մերոյ և փրկչին յի քի.

Շմարտապէս դու տէր իմ քաղցր ես և հեզ և բազում ողորմ. որ զմեզ հրաւիրես ՚ի հարսանիս և ՚ի խրախճան քո տէր, և զմեզ սնուցանես պատուական մարմնով և արեամբ քով: Սքանչելի է անուն քո տէր ՚ի վյ ամ երկրի, բայց զինչ է մարդ զի յիշես դու զնա կամ որդի մարդոյ զի այց առնես նմա. և մեծացուցանես զնա կացուցանելով ՚ի վյ ամ ձեռակերտաց քոց. ոչ ապաքէն հող և մոխիր, և ընդ հանուր ունայնութիւն. դու արժանի համարիս ՚ի վյ այսպիսի թշուառացելոյս բանալ զ՚ըս քոյ մտանել առնա, և օթևանս առնմա առնել:

առնել. զինչ տաց տրիտուր Տն ընդ ամե
զոր ետ ինձ։ Դու Տր իմ փարթամ ես
առ ամենեսեան, և հզօր 'ի վր ամի, զի
ամ ինչ քո է. իսկ ես աղքատ և տնանկ,
և կարօտ քում բարութեդ, զինչ ուրեմն
հատուցից քեզ փոխանակ այդքաներոց բա
րերարութեցդ։ Ոի բազում է ողորմու
թն քաղցրութե քոյ Տր զոր պահեցեր եր
կիւղածաց քոց. և զի զքաղցրութն քո
ցուցանիցես առ որդիս քո, յերկնուս
տուեալ ամենամաքուր հացիւդ զքաղ
ցեալս լցուցանես բարութբ։ Որդ քաղցր
են 'ի քիմս իմ բան քո, որով զիս այդքան
սիրով հրաւիրես առ քեզ. բայց ոհ զինչ
եմ ես, զի 'ի սեղանոյ թագաւորիդ թա
գաւորաց կերիցեմ զհաց զամ աւուրս կե
նաց իմոց։ Ուստ ինձ առնել զկամս քո
զի ծառայ քո եմ, ով զի կամաւ զպատ
րաստ մատուցանիցեմ քեզ, և խոստովա
նիցիմ անուան քում Տր զի բարի է։
Եւ զի ով փափաքի եղջերու յաղբեր
ջուրց, այնպէս փափաքիցի առ քեզ անձ
իմ, և ցանկանայցէ բնակիլ 'ի դաւիթ
քոյս, և յօժարութբ մտանիցեմ առաջ
սեղանոյ Այ առ Ած, որ ուրախ առնէ
զմանկութն իմ. և արբեցից յաղբերէ փր
կչին իմոյ որ է ցնծութն անձին իմոյ։



Մեր

Կերպ խոստովանելոյ շնորհաբաշխական աղօթիցն ի պատուէ
ամենասուրբ հաղորդութեանն մաքրութեան աղբերանն Քն

Հայր մեր որ յերկինս ես։

Ամենակարող և ամէն իմաստ Հայր բարեգութ, որ առ ՚ի ցուցանել որդւոց քոց զքաղցրութիւն քո, համեղագոյն հացիւ որ իջեալ է յերկնից, զքաղցեալս լցուցանես, և զամ ստեղծուածս հայրաբար և հրաշապէս կերակրես, սնուցանես, և պահես։ Արդ և ես մի եմ ՚ի նոցանէ, թէ և անարգագոյն և անարժանագոյն քան զամենեսեան, զթա՛ ուրեմն և առ իս, որ համարձակիմ համբառնալ զաչս իմ առ քեզ որ բնակեալդ ես ՚ի յերկինս, և նայեաց ՚ի յիս աղքատացեալս և հեռացեալս յերեսաց հօրդ զի ՚ի մէջ որդւոցն եւայի, ՚ի հովիտս այս արտասուաց, կենցաղավարիմ նշդեհ և պանդուխտ հառաչելով առ քեզ ի խորոց սրտէ, և զամ յոյս իմ և ակնկալութի իմ ՚ի քեզ է։

Սբ եղիցի անուն քո։

Քան զի այս է մանաւանդ իղձ և ցանկութի սրտի իմոյ, զի զամ ինչ զոր առնեմ, զոր ասեմ, և զոր խորհիմ, ՚ի փառըս մեծագոյնս անուան քոյ առնիցեմ. Ես առաւել այժմ, որ մատչիմ ՚ի սբ խորհուրդ մարմնոյ և արեան որդւոյ քոյ միածնի.

նի· և միշտ ջանք, և դիտաւորութիւն իմ
այն է, զի փառաւորիցի և հռչակեսցի քոյդ-
վեհագոյն մեծութիւն, քոյդ անչափ կարո-
ղութիւն, քոյդ անբաւ բարութիւն, և քոյդ
անհասանելի իմաստութիւն· որում վայելէ
փառք և պատիւ և երկրպագութիւն, վասն զի
դու այնքան սիրեցեր զմեզ, մինչ զի զոր-
դին քո միածին ետուր մեզ 'ի կերակուր,
և 'ի փրկանս անձանց մերոց:

Եկեսցէ արքայութիւն քո:

Որոյ արքայութեան զերանութիւն և զվայել-
չութիւն յայսմ սրբազան խորհրդեանս
ճանաչեմք, քան զի ետուր մեզ առ հա-
ւատչեայ հանդերձեալ փառացն զմարմին
և զարիւն որդւոյ քո, և այսպէս շնորհիւ
որդեգրութեան զմեզ ես արարեր քեզ ժա-
ռանգս, և ժառանգակիցս Քի· Իսկ այժմ
մինչ տակաւին յաքսորանս պանդխտանամք,
տուր մեզ, զի այնպէս վայելեսցեմ զայս
սբ պարգևս, ոպ զի օրըստ օրէ ևս քան
զևս յառաջանայցէ 'ի մեզ արքայութիւն
քոյոց շնորհաց· և ապա եկեսցէ 'ի վր
մեր արքայութիւն քոյոց փառաց:

Եղիցին կամք քո:

Եւ զինչ էն կամք քո եթէ ոչ սրբու-
թիւն մեր, և մանաւանդ մինչ մաքրիմք
'ի սրբութիւնս սրբոց· և հրամայես, զի ճա-
շակիցեմք զմարմին որդւոյ մարդոյ և ըմ-

պիցեմք զարիւն նր̄. եթէ կամիցիմք ունիլ զկեանս յանձինս մեր։ Եւ ո՛վ համարձակէր զայս առնել նայելով 'ի տկարութիւր, եթէ դու հանդերձ որդւովդ սիրով և վայելչաբար ո՛չ էիր հրաման տուեալ։ Արդ զի այսպէս կամեցար, եղիցի զոր կամիս, և ո՞վ կամիս, այսինքն, կամիս զի սբք իցեմք, զի դու սբ ես. և սբ է որդիդ քո միածին առ որ մատչի՛ք. բայց ո՛վ է որ սրբէ զմեզ, եթէ ո՛չ դու։ Տուր ուրեմն զոր հրամայես, և արա՛ զի զսրբութիս մեր կատարունակիցեմք, զգաստութբ, և բարեպաշտութբ. և ո՞վ 'ի յերկինս սբքն մաքուր մտօք, և ջերմեռանդ ըղձիւ վայելեն զհացս զայս կենդանի բացօք երեսօք, այսպէս և մեք 'ի յերկրի մեծացանկութբ, և ուղիղ սրտիւ ուտիցեմք զնա ծածկեալ ընդ տեսակօք, մինչև և մեք ընդ ընտրեալսն զմայլիցիմք նովաւ ըստ յատուկ տեսակին, և յագիցիմք 'ի պարարտութէ տան քոյ։

Օ հաց մեր հանապազորդ։

Քան զի աչք ամենեցուն 'ի քեզ յուսան տր, և դու տաս կերակուր նց 'ի ժամու. դու բանաս զձեռն քո, և լցուցանես զամ կենդանի որհնութբ։ Եւ գիտես, զի ո՛վ մարմին հանապազորդեան կերակրով հաստատիլ խնդրէ, այսպէս և

 հոգի

հոգի իւրային կերակրով կազդուրել հայ-
ցէ. քանզի զոր օրինակ զայն բնական ջեր-
մութիւն անդադար մաշէ, այսպէս զսա
գերբնական ջերմեռանդութիւն յաւետ
ստիպէ։ Բայց երանի այնոցիկ որք հացա
լիցք են 'ի տան տն, զի անդ հացն կենաց
շնորհի, և բանիւն այ առատապէս բեկա
նի, անդ բաշխի հացն սրբազնական, և
հացն կենդանի որ իջեալ է յերկնից. և
ծնեալ է 'ի բեթղեհէմ, և անդ հացն հրեշ
տակաց դնի առաջի ամենեցուն։ Ով պա
տուական և ազնիւ կերակուր, ով մեծի
հօրն յաւիտենականի սէր և ողորմութի.
քանզի մեզ ոչ սերմանողաց, ոչ հնձողաց,
և ոչ 'ի շտեմարանս ժողովողաց, ցորեան
ընտրելոց, և հաց կենդանի յերկնից տո
ւեալ լինի։ Զի դու տր սերմանեցեր զնա
յերկրի, դու մանգաղաւ մահուան քոյ
հնձեցեր, դու զնա 'ի շտեմարան եկեղե
ցւոյ քոյ առ 'ի սնուցանել զորդիս քո ժո
ղովեցեր։ Արդ տուր ինձ ամենագութ
հայր այսու հացիւ բազում անգամ արժա
նապէս զօրանալ. և եթէ ոչ սրբազնա
բար, գոնէ հոգևորապէս, քանզի ոչ զոր
հանապազ մեղանչեմ, այսպէս զօրհանա
պազ պիտոյէ ինձ դեղ բժշկութե.

Եւ թող մեզ զպարտիս մեր։

Աւաղ թէ զի արդ զբազումս և զծանու

նչա ունիմք ամբարշտեցեալք, քան զի բազում խուխք մեղաք ամենեքեան, և եմք եղկելեք և աղքատք, և տկարք 'ի հատուցմանն և 'ի բաւականութեն։ Բայց ահա մեր առաջի քո է ողորմութեն, և առատ է առաջի որդւոյ քո միածնի փրկութեն, զոր ետուր մեզ գթացեալ 'ի վերայ մեր. որ և գոլով արդար, անարատ, և անմեղ ըստ մարմնի հատոյց քեզ զոր մեքն պարտէաք, մեք մեղաք, և նա վճարեաց, և արդարութեն քում զբաւականութեն շնորհեաց. աւանդելով մեզ զգանձ արդեանց իւրոց. և զանհուն գին պատուական արեան իւրոյ. զոր իբրև զաւանդ 'ի գեր յարգեցելոյ արկեղ այսօրինակ սրբազնութեան թաղուցեալ ունիմք։ Արդ զգանձս զայս այժմ մատուցանեմք քեզ հայր յաւիտենական. զի առնուցուս անտի որքան և կամիցիս փոխանակ պարտուց մերոց. քան զի մեք թափուր եմք յամենայնէ. և միայն ապաւինեալ եմք 'ի շնորհս սիրեցելոյ որդւոյ քո. որոյ յաղագս և աղաչեմ զքեզ թողուլ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։

Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութեն։

Տէր որ պատրաստ արարեր առաջի մեր զսեղան, ակն յանդիման նեղչաց մերոց. և եդիր 'ի վերայ նորա զհացն անմահութեն, որ

զօրացուցանէ զսէրս մարդկան ընդդէմ ամ փորձութեանց, աշխարհի, մարմնոյ, և սատանայի։ Տուր ինձ միջնորդութեան երկնայնոյ և կենդանարարի հացիս այսորիկ զշնորհս և զկարողութիւն, զի մի փորձեցեալ կործանեցայց, այլ առ քեզ հարազատապէս մերձեցայց։ Մի զփոյթ յանձին կալցայց գոլ բարեկամ աշխարհիս, կամ կերպարանիլ անցաւորացս, այլ փոխարկեցայց 'ի քեզ. և քեզ միայնոյ հաճոյանալ ջանասցայց։ Պարշելի եղիցի ինձ երկիր, զի աստ պերկինս տեսանեմ, և զտէրն տիեզերաց նկատեմ։ Մի հեշտութիւնք մարմնոյ շարժեսցեն զիս, որով հետև մարմին անարատ գառին քո ինձ 'ի կերակուր տուեալ լինի. մի իշխեսցէ 'ի վր իմ սատանայ այլ դու տր. զի կարիցեմ միշտ ասել, եթէ ած 'ի մեր կոյս է, ով իցէ մեզ հակառակ։

Այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ։

Քան զի 'ի կենցաղում այսմիկ 'ի ներքոյ բազում պատահմանց և թշուառութեանց ա՛ կեալ կամք, որք զմեզ տկարս 'ի վայր կործանեն և 'ի քէն հեռացուցանեն. Արդ ով զմեզ ազատեսցէ 'ի չարեաց յայսցանէ, եթէ ոչ դու աղբիւրդ ամ բարութեան. և զոր ետուր մեզ բարեխօս առ քեզ, և ամ փրկութեան և երանութեան պատ

Ճառս յս Քս. որ զմեզ 'ի մեղաց և 'ի մահո-ւանէ փրկեաց արեամբ իւրով։ Այսու միջնորդիւ արա՛ ուրեմն զի համայնք մեզ գործակիցք լիցին 'ի բարին. զի ո՛չ գոյ մեզ փրկութիւն այլ ով իւիք։ Սա ո՛վ ճըշ-մարտապէս մերձակայ է յայսմիկ սրբազ-նութեն. այսպէս ընդ մեզ եղիցի ամ ու-րէք. սա զմեզ արածեսցէ, հովուեսցէ, պահեսցէ և պատսպարեսցէ ըստ հաճութեն իւրում. իբրև զոչխարս արօտի իւրոյ։

Աղաչանք վասն հաղորդութեան մարմնոյ և արեան տեառն.

Տէ՛ր ողորմեաց։ Քրի՛ս ողորմեաց։ Տէ՛ր ողոր։ Հա՛յր երկնաւոր ած որ այնպէս սի-րեցեր զաշխարհ, մինչ զի զորդին քո միածին ետուր 'ի մահ վն մեր ողորմեաց ինձ։ Հա՛յր յաւիտենական որ առաքեցեր զորդին քո յաշխարհ, ո՛չ զի դատեսցէ զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ, ողորմեաց ինձ, զի մարմին և արիւն նորա մի լիցի ինձ 'ի դատապարտութիւն, այլ 'ի կեանս և 'ի կեցութիւն։ Հա՛յր ամենիմաստ, որ անքննելի խորհրդով զփրկութիւն մեր գոր-ծեցեր 'ի մէջ երկրի, և զորդին քո զոր յաւիտենից քեզ հաւասար ծնար, 'ի ժա-մանակի 'ի կուսէն ծնանիլ և յայսմիկ սըր-բազնութեն նոր և զարմանալի կերպիւ լի-



նել,

նել, և մինչև 'ի կատարած աշխարհիս գոլ ընդ մեզ կամեցար, ողորմեա ինձ, զի այդչափ անճառելի շնորհաց և բարերարութեանց քոց մի՛ երբէք ապերախտ գտայց։ Հայր ամենաբարի, առ որ բարեխօս ունիմք զյս̃ ք̃ս, որ է՛ քաւութի̃ մեղաց մերոց, ողորմեա ինձ, զի նովաւ զթողութի̃ մեղաց իմոց 'ի քէն գտանել արժանի եղէց․ զի սա է գառն ա̃յ որ բառնայ ըզ մեղս աշխարհի։ Հայր ամենակարող․ որ 'ի վերուստ վկայեցեր զսա գոլ որդի քո սիրելի, ողորմեա ինձ, զի թէ և գործովք 'ի մովք քեզ հաճոյանալ ո՛չ կարեմ, սակայ՛ն սովաւ գտից զշ̃նորհս առաջի աչաց քոց։ Հայր ամէն առատ, որ խոստացար տալ մեզ յանուն որդւոյ քոյ միածնի զինչ և խնդրիցեմ հաւատով, ողորմեա ինձ, զի զսրբազնութի̃ս զայս որ է մարմին և արիւն որդւոյ քոյ մի՛ ճաշակիցեմ ինձ 'ի դատապարտութի̃ այլ 'ի քաւութի̃ մեղաց իմոց։ Հայր ամենասո̃ւբ, որ բանաս զձեռն քո և լցուցանես զա̃մ կենդանի օրհնութե̃ քով ողորմեա ինձ, զի հացս այս յերկնից իջեալ հաստատիցէ զսիրտ իմ 'ի յաւիտեան։ Որդի փրկիչ աշխարհի ա̃ծ, որ վ̃ն անբաւ սիրոյդ զգործ փրկութե̃ մերոյ յանձն առեր, և յամենամաքուր յարգանդէ կուսին զմարմին առեալ 'ի



նմա

նմանութիւն մարդկան եղեր, և կերպարանօք գտար իբրև զմարդ. ողորմեաց ինձ, զի զայս չափ անբաւելի սիրոյ քոյ և ամենայն տնօրէնութեան գլխաւորական ջերմեռանդն սրտիւ 'ի միտ ածից, որքան այսու հաղորդութեամբ ծնանիս յանձին իմում։ Ո՜ քաղցրագոյնեդ փրկիչ որ պատրաստ արարեր առաջի մեր զսեղան, ակն յանդիման նեղչաց մերոց, ողորմեաց ինձ, զի մի՛ երբեք զօրասցին ընդդէմ ինձ թշնամիք իմ, և ո՛չ երկեայց 'ի չարէ զի դու Տէր ընդ իս ես, և այսմիկ սրբազնութեան ինձ սիրով մերձ ես։ Ո՜ համեստագոյնեդ, որ ասացեր եկայք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ. ողորմեաց ինձ, զի թեթևացայց 'ի ծանրութենէ մեղաց իմոց. և այսու երկնային կերակրով հանգո՛ զքաղցեալ և զլքեալ հոգի իմ։ Ո՜ ամենողորմ. որ գթացար 'ի վերայ ժողովրդեանն և հրաշալի զօրութեամբ զամենեսեան յագեցուցեր, ողորմեա՛ ինձ. զի մի նքթիցիմ 'ի ճանապարհի, վրիպելով 'ի յերկնային կերակրոյդ. Ո՜ ամենաառատ, որ ետուր մեզ զհացդ պարարտ, որ տայ զվայելչութիւն թագաւորաց, և կերակրես զմեզ 'ի յեբբիկամաց ցորենոյ, ողորմեաց ինձ, զի ճարպով և պարարտութեամբ լնասցի անձն իմ, և մի՛ մոռացայց ուտել

 զհաց

զհաց իմ, մի՛ գուցէ ցամաքիցի և նուաղէ
ցի սիրտ իմ։ Ով բարեգութ որ զմեղ յոր
դորս առ 'ի ճաշակել զքեզ ասելով. մար
մին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւնն
իմ ճշմարիտ ըմպելի, ողորմեա ինձ, և
տուր ինձ զհացս զայս և զըմպելիս արժա
նապէս ճաշակել, զի մի՛ միասանգամ քաղ
ցեցայց և ծարաւեցայց։ Ով խոնարհագու
նեղ, որ ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս
ընտանեբար նստիլ և ուտել հաճեցար,
ասելով, ոչ է պիտոյ բժիշկ ողջոց այլ
հիւանդաց, ողորմեա, ինձ, զի և առ իս
մեղաւորս ագանիլ կամիցիս, և զանձն իմ
'ի հիւանդութենէ բժշկեցես։ Ով ամենա
բաղձալի, որ ցանկանալով ցանկացար նախ
քան զչարչարելդ ուտել զայս պասեքս ընդ
աշակերտս քո, ողորմեա ինձ, զի ո՜չ փա
փաքի եղջերու յաղբերս ջուրց այնպէս
փափաքի անձն իմ առ քեզ Տր։
Ով ամենամաքուր որ կամելով հաստա
տել զայս սրբազնութիւն, նախ զոտս աշա
կերտաց քոց լուացեր, առ 'ի ուսուցանել
մեզ ճաշակողացս զմաքրութիւն հարկա
ւոր, ողորմեա ինձ, և առաւել լուա զիս
յանօրէնութենէ իմմէ, և 'ի մեղաց իմոց սր
բեա զիս։ Ով քաղցրահայեաց, որ զծառն
կենաց 'ի մէջ դրախտի եկեղեցւոյ քոյ տըն
կեցեր, 'ի բժշկութիւն մեր ցաւոց, ողորմեա

ինձ, զի զպտուղ կենաց և անմահութե՟ անտի ընկալայց, և նորոգիցի ոպ՟ արծուի մանկութիւն իմ։ Ո՜վ ամենապարգև որ ըղ քեզ մեզ ետուր ծնանելով յընկերակցութի, սեղանակից ելով 'ի ճաշակումն, մեռանելով 'ի փրկանս, և թագաւորելով յապա տալոցես 'ի հատուցումն, ողորմեաց ինձ, զի փոխանակ այսքան բարերարութեցդ օրհնեսցէ զքեզ անձն իմ յամ՟ ժամ, և ամ՟ ոսկերք իմ զանուն տե՟ քո։ Ո՜վ ճշմարտագունեղ, որ զքեզ տալով 'ի կերակուր և յըմպելի, ասացեր, այս է մարմին իմ որ վս՟ ձեր բաշխի, և այս է արիւն իմ որ վս՟ ձեր հեղանի, ողորմեաց ինձ, զի մի երկմտեցայց 'ի հաւատոց քոց, և 'ի բանս սրբազանի բերանոյ քոյ․ յորում ոչ գտաւ երբէք նենգութի՟։ Ո՜վ քահանայ յաւիտեան, և հովիւ բարի, որ զքեզ 'ի վր՟ սեղանոյ խաչին մատուցեր պատարագ․ և եդիր զանձն քո 'ի վր՟ ոչխարաց քոց, ողորմեաց ինձ, զի մոլորեցայ ես ոպ՟ զոչխար կորուսեալ խնդրեա զծառայ քո, և բարձ զիս 'ի վր՟ ուսոց քոց, և ժամանեցո 'ի հօտ քո տր՟։ Հոգիդ տր՟ ած՟, որ զխորհուրդ մարդեղութե՟ տն՟ մերոյ յի՟ քի՟ հրաշալի զօրութբ՟ ածութեդ՟ գործեցեր յարգանդի կուսին, ողորմեաց ինձ, զի և ես զնոյն տրն՟ և զածն՟ մաքուր սրտիւ յայսմ

 սրբազ

սրբազնութե ներհաւատայցեմ, և գործովք
սրբութե յայտնապէս ցուցանիցեմ։
Ս՛ Երրորդութիւն մի ած, որ բանաս ըզ
ձեռն քո և լցուցանես զմմ կենդանի ողոր
մեաց ինձ, զի զօրութբ հացիս այսորիկ
որ հաստատէ զսիրտս մարդկան, գնացից
ընդ անապատս այս մինչև հասից 'ի լեառն
ած։ Սբ Երրորդութիւն մի ած, որ որդւոցն
իսրայէլի զգառն զատկական 'ի յօրինակ
փրկչին մերոյ ուտել հրամայեցեր, ողոր
մեաց ինձ, զի քանիցս անգամ ճաշակիցեմ
զսրբազնութիս զայս, զգործկեցութե ի
մոյ յիշէցեմ։ Սբ Երրորդութիւն մի ած. որ
զորդիսն իսրայէլի մանանայիւ կերակրե
ցեր յանապատին, ողորմեաց ինձ, զի որ
բեալ զսենեակ սրտի իմոյ ճաշակեցից զճշ
մարիտ մանանայն և տեսից զի քաղցրէ տր։
Սրբուհի կոյս մարիամ, որ միայն օրհնեալ
դես 'ի կանայս, և ընտրեցեալ 'ի վեհագոյն
խորհուրդ տէրունական մարդեղութե,
բարեխօսեա վն իմ, զի և ես անարժան
ծառայ քո զորդիդ քո միածին մաքուր
մտօք յայսմիկ սրբազնութե վերընդունել
կարիցեմ։ Ամ սբ հրեշտակք և հրեշտակա
պետք որք տն ձեռուամ վն մեր մարդա
ցելոյն երկիրպագանէք. բարեխօսեցէք վն
իմ. զի և ես զհոտցս զայս հրեշտակաց ար
ժանայցէս միշտ պատուիցեմ, և երկրպագ

մամբ ճաշակիցեմ։ Սբդ յովսէփ, որ 'ի
փեսայութեն մարիամու, և սնուցիչ քն այ
ընտրեցար, բարեխօսեա վս իմ, զի և ես
երկոցունց փութոյ պնտութբ սպասաւո
րել կարիցեմ, և ս առաւել զ.քս 'ի սրբազ
նութեն այսմիկ ըստ արժանւոյն պաշտի
ցեմ։ Սբ սիմէոն, որ երկարաձիգ ակնկա
լութբ և սաստիկ բաղձանօք զմեսիայն տե
սանել ցանկացար, բարեխօսեա վս իմ, զի
և ես ջերմեռանդութբ փափաքեցից տե
սանել զ.քս 'ի փառս, և 'ի սրբազնութեն
այսմիկ քացրալէր սրտիւ ողջագուրիցեմ։
Բ.մ սբ մարգարէք և նահապետք որ զա
նազան օրինակօք յառաջագոյն կերպագ
րեցիք զսրբազնութն պատարագիս, բարե
խօսեցէք վս իմ, զի զորդին այ սրբութբ
պաշտիցեմ յայսմիկ սրբութեն, և մաքուր
սրտիւ ըմբռնել կարիցեմ։ Բ.մ սբք անմեղ
մանկունք, որ նորածին քն զնորաբողբոջ
մարմինս ձեր 'ի նուէրս ընծայեցիք, բա
րեխօսեցէք վս իմ, զի և ես ընդ սրբազնու
թեն այսմիկ զանձն իմ այ պատարագ կեն
դանի մատուցանել կարիցեմ։ Սբ յոհան
նէս մկրտիչ։ որ ողջունեցեալ 'ի քէ, և
յամէն օրհնեցելոյ մօրէ նր խաղացեր յո
րովայնի մօր քո բարեխօսեա վս իմ, զի և
ես ուրախ մտօք առաջի սեղանոյ այ առ
ած որ զուարճացուցանէ զմանկութն իմ։

 Սբ

Ս՟ր պետրոս գլուխ առաքելոց, որ զՔ՟ս
որդի Ա՟յ կենդանւոյ դաւանեցար, և հօ
վիւ ոչ խաբրաց նորին կարգեցար, այլ և
զբանալիս արքայութե՟ ՚ի նմանէ ընկալար,
բարեխօսեա՛ ինձ, զի և ես զնա ՚ի սրբազնու
թե՟ այսմիկ Ճշմարիտ որդի Ա՟յ դաւանեցից։
Ս՟ր պօղոս, անօթ ընտրութե՟, և յափշ
տակեցեալ ՚ի յերրորդ երկինն յաղագս տե
ղեկանալոյ խորհրդոցն երկնայնոց, բարե
խօսեա՛ վ՟ս իմ զի նախ քան զմատչիլն իմ
՚ի սոսկալի խորհուրդ մարմնոյ և արեան
Տ՟ն զգուշութբ փորձիցեմ զանձն իմ։
Ս՟ր յովհաննէս սիրելի աշակերտ Տ՟ն որ
անկար զլանջօքն յն ողորմեաց ինձ, զի ՚ի
մատչելն իմ առ Ք՟ս փրկիչն իմ ներ սրբազ
նութե՟ այսմիկ, զմայլեցի՟մ երկնային խն
դութբ։ Ա՟մ ս՟րբ առաքեալք, որք ՚ի վեր
ջին ընթրիսն ՚ի Ք՟սէ փրկչէն ձերմէ ա
ռիք զիշխանութի՟ սրբազնագործելոյ զս՟րբ
խորհուրդս զայս բարեխօսեցէք վ՟ս իմ,
զի մաքրեալ զխիղճ մտաց իմոց մատչի
ցիմ ՚ի հաղորդութի՟ Ա՟ծայնոյ խորհրդոյս։
Ա՟մ ս՟րբ մարտիրոսք որք Ք՟ի թագաւորին
մարտիրոսաց ընծայեցիք զկեանս ձեր, բա
րեխօսեցէք վ՟ս իմ, զի հոգևոր մարտիրո
սութբ մեռուցանելով զանձն իմ մատու
ցից զնոյն Ա՟յ պատարագ կենդանի ՚ի հոտ
անուշից։ Ա՟մ ս՟րբ քահանայապետք և խոս


տովա

տովանօղք, որք իբրև հազարապետք խո
րոյն ա̄յ, սրբութ̄բ կատարէք զքահանայա
գործութ̄ն, բարեխօսեցէք վ̄ն իմ, զի ըղ
գործ հաւատարիմ քրիստոնէի արիաբար
կատարիցեմ: Ո՜վ ս̄րբք միակեացք և անա
պատականք, որք երկնային մանանայիւ և
կենդանի հացիւ սնուցէք զանձինս ձեր,
բարեխօսեցէք վ̄ն իմ, զի զհեշտութիւնս
աշխարհիս արհամարհելով, միայն ցան
կացայց երկնային կերակրոյն: Ո՜վ ս̄րբ կու
սանք, որք ժուժկալութ̄բ և ողջախոհու
թ̄բ մատուցիք զանձինս ձեր պատարագ
փեսային ձերում երկնաւորի, բարեխօսե
ցէք վ̄ն իմ, զի 'ի ձեռն կուսաբողբոջ գի
նւոյն, զնախանձ ողջախոհութ̄ն արբիցեմ:
Ո՜վ ս̄րբք ընտրեալք ա̄յ, որք արդէն 'ի հայ
րենիսդ զմայլիք սիրով հացին երկնայնոյ,
բարեխօսեցէք վ̄ն իմ, զի և ես զօրացեալ
նովաւ ժամանիցեմ առ ձեզ, և յագիցեմ
'ի պարարտութենէ տանն ա̄յ:

Ողջոյն առ արքայական մարմին և արեանն տեառն·

Ա̄ծ, որ մեզ 'ի ներքոյ սքանչելի խոր
հրդոյս զյիշատակ չարչարանաց քոց թո
ղեր, շնորհեա՛ աղաչեմք, այնպէս զսուրբ խոր
հուրդս մարմնոյ և արեան քոյ պաշտել,
ո̄պ զի զպտուղ փրկութ̄ն քոյ 'ի մեզ միշտ
զգայցեմք, որ կեաս և թագաւորես 'ի մի

 ութ̄ն

ութեն հոգւոյն սրբոյ ա̃ծ 'ի յաւիտեանս յաւիտենից. Ամէն.

## Աղօթք առ ա̃ծ վասն հաղորդութեան.

Քաղցրագունեդ ա̃ծ արարիչ և փրկիչ անձին իմոյ, վշտանամ սրտի մտօք, զի մերթ բարկացուցի զքեզ տ̃ր իմ և ա̃ծ իմ, զոր պարտէր ինձ սիրել քան զա̃մ ինչ, զի ամենաբարի ես, և զբազում բարութիւս արարեր առ իս. և աւաղ զի ես եղկելի և ապերախտ մեղաւորս հատուցի քեզ զչար փոխանակ բարեաց։ Այց դու տ̃ր քաւիչ լեր մեղաց իմոց, քան զի այժմ հաստատապէս ուխտեմ ոչ ևս զայրացուցանել զքեզ. և փախչիլ 'ի բնաւից պատճառաց մեղանչելոյ. Նմին իրի և այժմ առ այս խորհուրդ մատչիլ ցանկամ, զի 'ի սէր քո հաստատեցիմ, և ընդդէմ ա̃մ պատճառաց մեղանչելոյ ամրանայցեմ, զի դու յիս և ես 'ի քեզ մնացից։ Արդ բաղձամ ով ա̃ծ իմ, մատուցանել քեզ ընդ սրբազան քահանայից զպատարագ գովութեն, 'ի փառս անուան քոյ սրբոյ, զի զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, և 'ի քէն զինչ խնդրեցից յերկրի, զի դու ես բաժին ժառանգութեն իմոյ և բաժակի իմոյ. դու ես որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս։ Դու տ̃ր արժանի ես վ̃ն գերազան

 ցութեն

ցութեն իմաստութեն և կարողութեն քոյ
ընդունիլ զօրհնութի զփառս և զպատիւ
յա՟մ արարածոց. վ՟ն այսորիկ խոստովան
եղէց քեզ տ՟ր բոլորով սրտիւ իմով, և փա
ռաւոր արարից զանուն քո յաւիտեան.
մատուցից քեզ զպատարագ օրհնութե,
և կատարեցից քեզ բարձրելոյդ զուխտ
իմ, 'ի յաւիտեան:

() ինչ հատուցից տ՟ն ընդ ա՟մի զոր ետ
ինձ, որ քաւէ զա՟մ անօրէնութիս իմ, և
պսակէ զիս ողորմութբ և գթութբ, որ
լնու 'ի բարութե զցանկութի իմ, և մար
դասիրապէս խնամէ զհոգի և զմարմին իմ,
անարժան եմ ես համայնից գթութեց
քոց, զի մեծ եղև 'ի վ՟ր իմ ողորմութի քո:
Դու արարեր և ստեղծեր զիս, և նորոգե
ցեր 'ի ձեռն որդւոյ քոյ միածնի, և մինչև
ցայսօր պահպանեցեր գոլով անկարօտ բա
րեաց իմոց: Արդ ահա որդիդ քո սիրե
լի զոր քեզ հօրդ երկնաւորի մատուցա
նեմ 'ի գոհութի, զի ոչ կարեմ զպատուա
կանագոյն ինչ առաւել քան զայս վերըն
ծայել քեզ. ընդ որ դու հաճեցար:
Դու հրաւիրես զիս 'ի մեծապայծառ
հարսանիս քո, և ես եղկելիս զինչ արա
րից, զի մերկ եմ և աղքատ ոչ ունելով
զհանդերձ հարսանեաց. և գիտակ եմ
իմոց մեղանաց որովք մանաւանդ բարկու
թե

թէ քան թէ շնորհաց եմ արժանի։ Ահա
միջնորդն մ՟յ և մարդկան, յ՟ս ք՟ս որդիդ քո,
զսա վ՟ ընծայեմ քեզ որ ոչ արար զմեղս,
այլ եղև քաւութիւն մեղաց մերոց, և լուաց
զմեզ արեամբն իւրով, ո՟ր նայեաց յերեսս
ք՟ի քոյ, և տես թէ զորքանս ի կեանս իւր
զաշխատութիւնս ՚ի չարչարանս իւր զտան-
ջանս ՚ի մահուան ի բում զցաւս, վ՟ մեր
կրեաց։ զայս ա՟ծ մատուցանեմ քեզ ՚ի բա-
ւականութիւն մեղաց իմոց, և զայս ՚ի
ձեռն սրբութեան այսօրիկ, զի սովա-
մարդասիրապէս ներիցես յանցանաց իմոց։
և մի՛ վրէժ խնդիր լինիցիս մեղաց իմոց։
Տէ՛ր ա՟ծ փարթամ ես ՚ի բարիս, և առատ
՚ի պարգևս, և յորմէ և որով, և յորում ա՟մ
ինչ է, իսկ ես եմ աղքատ և տնանկ. բայց
զինչ է զոր ո՛չ շնորհիցես ինձ, որով հետև
մեզ պաղատելոյն համայնից շնորհաց. զմիա-
ծին որդիդ քո, և հանդերձ նովաւ զա՟մ
բարիս մի անգամայն մեզ շնորհեցեր. ՚ի
դմա զա՟մ գանձս շնորհաց, բարութե՟ն,
և իմաստութե՟ն գումարեցեր, զի եղիցի ա-
ռատ առ ամենեսեան։ Արդ զդա մա-
տուցանեմք քեզ, զի դովաւ որ բարեխօս
է վ՟ մեր և լցեալ լինի առ լաւութե՟ն իւ-
րում, տայցես եկեղեցւոյ քում զա՟մն
և զխաղաղութիւն, արդարոց զտևողութիւն,
մեղաւորաց զթողութիւն, ննջեցելոց զհան-


գիստ

գիտա, և տայր զկեանս յաւիտենականս, Մինչ եկն Տ՛ր փրկիչ աշխարհի, որ եկիր զմեղաւորս կեցուցանել. և ասացեր, եկայք առ իս ամ՛ աշխատեալք, և ծանրաբեռնեալք, և ես հանգուցից զձեզ. ահա ես մեղաւորս առ քեզ գամ համարձակեմ, զի առ ամ՛ է առ քեզ փրկութի՛ւն. Գ՛ամ առ քեզ, զի եթէ 'ի բաց կայցեմ 'ի քէն, մոլորեցայց ոչ՛ զոչխար կորուսեալ, բայց դու հովիւդ բարի, որ եդիր զանձն քո 'ի վ՛ր ոչխարաց քոց, որ եկիր 'ի խնդրել և կեն՛ցուցանել զկորուսեալսն, խնդրեա՛ զծառայ քո Տ՛ր, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ. Գ՛ամ առ քեզ բազում գանիւք վիրաւորեալ և չարաչար խոցոտեալ, այլ դու Տ՛ր եթէ կամիս, կարող ես զիս բժշկել. զի դու գիտես թէ հիւանդաց պիտոյ է բժիշկ. Դ՛ու ես սամարացին, հոգւոց մերոց ճշմարիտ բժիշկ որ զցաւս մեր բարձեր. դու ես որ ետուր 'ի դեղ հոգւոյս իմոյ զխորհուրդ պատուական մարմնոյ քոյ. Ա՛րդ ողորմեաց ինձ Տ՛ր, և բժշկեա՛ զանձն իմ, զի մեղայ քեզ. պատարագ քո է հոգի խոնարհ, զսիրտ զղջացեալ և խոնարհեցեալ ոչ արհամարհես. Ոսանաւ ընապէս մատուցանեմ քեզ. զի և զպատարագ պատուական մարմնոյ և արեան քոյ համարձակագոյն նուիրեցեմ. արդ դու



խզեա՛

խղճամ զկապեալս մեղաց իմոց. քանզի այս
պէս մատուցից քեզ զպատարագ օրհնու
թեան, և զանուն քո տէր կարդացից 'ի յաւի
տեանս յաւիտենից. Ամէն.

Նորգ սրբոյն Ներսիսի առ սրբոյն Հոգւոյն

Երկրպագեմ տենչմամբ սրտի Աստուածութեան.
ստուգիւ ծածկեալ զգալի ձևօք յայսմ
խորհրդեան.
Քեզ խոնարհի սիրտ իմ բոլոր ողջ արժանի.
զի զքեզ տեսեալ ոչ հանդարտի քոյդ մե
ծութեան.
Տեսաք և քիմք քև սխալին ընդ շօշափման.
բայց լսելեօք հաւատալի լինի միայն.
Սոյդ հաւատամ զորինչ ասաց Ած ըն բանն.
քան զոր ոչ ինչ է ստուգագոյն ճշմար
տութեան.
Ի խաչին էր Ածութիւն անյայտ միայն.
իսկ աստ թագչի և մարդկութիւն համանա
գամայն.
Բայց հաւատով խոստովանիմ ես զեր
կոսեան.
Խնդրեմ զհայցեալն աւազակին գործով
զղջման.
Ո՛չ շօշափեմ ո՛պ Թովմաս երկբայական.
այլ հաւատամ զՏէր և Ած հաւատական.
Տուր ինձ 'ի քեզ զհաւատ ունել յաւե
ժական.

'ի քեզ յուսալ և զքեզ սիրել քան զա̃մ․
Մ՛վ յիշատակ մշտակառոյց ա̃ն մահուան․
հաց կենդանի կենդանարար ազգի մարդ-
կան․
Շնորհեա՛ մտաց իմոց 'ի քեզ կեալ ան-
սասան․
և ըղ քեզ քաղցր միշտ իմանալ 'ի յաւիտեանս․
Մ՛վ հաւատոյս գործակցութ բանդ հայ-
րական․
զիս անմաքուրս մաքրեա՛ ցօղով քոյոյ ա-
րեան․
Որոյ կաթիլ մի 'ի սկայպէս է բաւական․
փրկել զաշխարհ 'ի յանցանաց միանգամայն․
Յոր այժմ հայիմ ծածկեալդ յս̃ 'ի ս̃ւ-
սեղան․
մաղթեմ 'ի քէն տալ ինձ յորում տենչամ
այ̃քան․
Զքեզ տեսանել բացերեսօք դէմ յան-
դիման․
և երանի լինել փառօք քոյդ տեսութեն․


E
D
C
G
A

Յաւուր Ուրբաթու.

Յաղագս տնօրէնութեան նշանաց և չարչարանաց տեառն Որդւոյ այ̅ քի̅·

Երկրպագեմ քեզ Ք̅ս արքայդ իմ և ազգաց · իշխան թագաւորաց երկրի, և տ̅ր հանուրց էակաց, և զպատարագ օրհնութե մատուցանեմ փոխանակ բազում բարերարութե քոյ զոր առ մեզ ցուցեր, առ սերմն վատթար, և առ որդիս կորստեան ։ Մինչ տակաւին էաք թշնամիք քո, յիշեցեր զողորմութիւ քո, տեսեր զնեղութի ժողովրդեան քոյ, և շարժեալ 'ի քաղցրութե սիրոյդ զմտաւ ածեր խորհիլ 'ի վր̅ մեր ըզ խորհուրդ խաղաղութե և փրկութե ։ Սակաւ 'ի մէնէր սիրոյ քում առ 'ի կատարել զգործ փրկութե մերոյ զքերովբէ ա̅ն կամ զսերովբէ, և կամ զմի ոք 'ի հրեշ



տակաց

տակաց սահմանել, ուստի ինքդ առ մեզ
գալ հաճեցար պատուիրանաւ հօր, որ
զսաստկագոյն սէրն 'ի քեզ փորձիւ տեսաք։
Ո՛վ անչափելի պատուոյ և մեծարանաց
արժանի տ̃ր, ա̃ծ անբաւափառ գոլով,
որդն անարգ լինիլ ո՛չ խորշեցար։ Ի. ծ̃ բը
նաւից գոլով, ծառայակից ծառայից
երևիլ կամեցար։ Փոքր թուեցաւ քեզ
մեզ հայր և տ̃ր անուանիլ. այլ և եղբայր
և բարեկամ մեր լինիլ և գոլ հաճեցար։
Ո՛ր չափ զքէն գոհանալ պարտական եմ
ես, զի զճանապարհ ուղիղ և բարի ինձ
և ա̃մ հաւատացելոց առ 'ի դիմել յարքայ
ութի̃ն քո յաւիտենական ցուցեր և յայտնե
ցեր, զի եթէ դու նախ քան զմեզ քոյով
երկրպագելի կենցաղավարութե̃դ ո՛չ էիր
յառաջեալ և ուսուցեալ, ո՛վ իշխէր կամ
համարձակիւր հետևիլ։

Ո՛հ թէ որքան 'ի բացեայ և տարանջատք
ա̃ծային յարքայութե̃ քումմէ, եթէ 'ի քոյս
մեծապայծառ օրինակս ո՛չ հայէին և ակ
նարկէին։ Ի. հա զկնի լուելոյ զայս քանս
քոյս նշանս և զվարդապետութի̃ս, տակս
ւին հեղգամք, զինչ լինելոց էր մեզ, եթէ
ո՛չ ունէաք զլոյս հետևելոյ քեզ։

Արդ շնորհեա ինձ տ̃ր քեզ հետևիլ. կե
դու ես ճշմարտութի̃ և իմաստութի̃ յա
ւիտենական. զի որ ընդ քեզ խորհի նա



ո՛չ

ո՛չ երբէք սխալի, զի դու ո՛չ խաբիլ կամիս, և ո՛չ խաբել կարես, որ հետևի քեզ, ո՛չ երբէք մոլորի, զի դու ես Ճանապարհ, յաւիտենական. և որ մերձենայ առ քեզ, ո՛չ երբէք մեռանի, զի դու ես կեանք յաւիտենական. և երանի թէ 'ի յիս բնակեիր, զի միշտ ընդ քեզ կենդանի լինէի, և երջանկութե՟ քով յաւիտենականիւ ըզմայլէի։

Սէրով հառաչելոյ շտեմարանն աղօթիցն Տէրունական հաւատարմացն քրիստոնէ.

Հայր մեր որ յերկինսդ ես։

Քաղցրագունեղ Հայր մեր յ՟ք՟ս, որ զմեզ զորդիս բարկութե՟ և կորստեան, 'ի յանցաւորութե՟ առաջին ծննդեանն ադամայ վերստին ծնար որդիս այ՟, և ժառանգս կենացն յաւիտենականաց արարեր զմեզ արեամբ քով. մինչ զի իրաւի Հայր հանդերձելոյ յաւիտենին կոչիցէ զքեզ մարգարէն. այսինքն, Հայր, և Նոր արարչագործ, կամ վերստին ծնօղ, ուստի մեք զքեզ Հայր նորոյ և անլուր սիրոյ Ճանաչեմք, պաշտեմք, և երկիրպագանեմք։ Եւ ահաւասիկ թէ զի ո՛րդ իցես Հայր բարի և խնամածու որդւոց քոց, այսու բաւականապէս յայտնի ցուցանես, զի զկերպ ա



ղօթելոյ

գոլթելոյ և զբանս պատեհս մեզ յանդի ման կացուցանես, որովք դիւրաւ զոր ինչ և խնդրիցեմք 'ի քէն, կամ 'ի հօրէ քումմէ յանուն քո, առնուլ կարիցեմք։

Ս̄բ եղիցի անուն քո։

Յս̄ քահանայապետ որ յաւուրս քո հաճոյ եղեր ա̄յ, և գտար արդար, և 'ի ժամանակի բարկութե̄ եղեր հաշտարար, ոչ 'ի ձեռն այլոյ իրիք զոհի, այլ արեամբ քով մտեր միանգամ 'ի սրբութի̄ս սրբոց։ Վ̄ան զի այդ պիսւոյդ վայելէր լինել մեզ քահանայապետ, որ ես ս̄բ, անմեղ, անարատ, զատեալ 'ի մեղաւորաց, որում ոչ էր հանապազ հարկ ո̄պ այլոց քահանայապետիցն, նախ վ̄ս իւրեանց մեղացն պատարագս մատուցանել, և ապա վ̄ս ժողովրդեան։ Ահա ս̄բ ես և ս̄բ է անուն քո, քան զի այսպէս և 'ի ծննդեան քում, մանաւանդ և նախ քան և զծնանիլդ քարոզիս 'ի հրեշտակաց, և հայր քո յաւիտենական ետ քեզ անուն, որ 'ի վեր է քան զա̄մ անուն, զի յանուն քո կրկնիցի ա̄մ ծունր, և յարևելից մինչև 'ի մուտս արևու օրհնեալ է անուն քո։ Տ̄ր, զինչ մատուցցուք սրբութե̄ անուան քոյ մեք անարժանք որդունքս երկրի, որով հետև անուն քո ըստ ինքեան ամենաս̄բ է, պատուեսցուք, գովեսցուք, փառաբանեսցուք, և հռչա


կեսցուք

կեցուք 'ի յաւիտեան ։ Դու հրամայես ասելով եղերուք ս՟բք, զի ես ս՟բ եմ․ ով զմեզ ս՟բս և մաքուրս արասցէ կյղացեալս յանմաքուր սերմանէ, եթէ ոչ դու քահանայ յաւիտեան, սրբարար Տ՟ր․ որ սրբեցեր զմեզ, և մատնեցեր զանձն քո վ՟ն մեր պատարագ, և զենումն Տ՟ր, զի սրբեցես քեզ զեկեղեցի անարատ և ամբիծ․ Արեամբ ս՟բ արա զմեզ ճշմարտութե՟, զի և մեք ս՟բ արասցուք զանուն քո՝ և այսպէս լուսաւորեսցի լոյս մեր առաջի մարդկան զի տեսեալ զգործս մեր փառաւորիցեն զքեզ և զհայր քո որ յերկինս է ։

Եկեսցէ արքայութի՟ն քո ։

Ո՟վ թագաւոր մեծ 'ի վեր քան զամ՟ թագաւորս երկրի թագաւոր փառաց, որ եկիր հեզութե՟ և խոնարհութե՟, ոչ ահաբեկելով մեծութե՟ քոյոց փառաց, կամ իշխանութե՟դ, այլ զողորմելիս սփոփելով մարդասիրութե՟ ։ Ունեալ 'ի թագաւորական զարմէ թագաւորես 'ի վ՟ր տանն յակոբայ և թագաւորութե՟ քոյ վախճան մի՛ լիցի․ արքայութի՟ քո չէ յայսմ աշխարհէ այլ սակայն կացեալ առաջի դատաւորին․ զթագաւորութի՟ քո ոչ թագուցեր․ նա և 'ի վ՟ր խաչին զարքունական վերնագիր կրեցեր․ Եւս փառօք և պատուօք պսակեաց զքեզ հայրն յաւիտենական․ և տո



ւաւ

ւաւ քեզ իշխանութի յերկինս եւ յերկրի։ Մարդ թագաւոր թագաւորաց ամենաբարի, արքայութի քո այժմ է շնորհաց. եւ ապա եկեսցէ արքայութի քո փառաց 'ի վր մեր, քաւ եւ մի լիցի, թէ ոչ որդիք ժառանգք արհամարհիցեմք զքեզ թագաւորդ մեր. այլ փարեսցուք զքեւ զի դու արքայդ խաղաղարար թագաւորիցես 'ի վր մեր, զի արդարութբ եւ մարդասիրութբ հաստատեալ է աթոռ քո։ Սրբեա լուսեա ուղղեա եւ թագաւորեա 'ի վր մեր իբր ամբրաւ ամբք քեզ հնազանդեցելոց. եւ տիրեա 'ի մէջ թշնամեաց քոց, եւ հովեա զնս գաւազանաւ երկաթեաւ, ոչ զի մեք զերծեալք 'ի ձեռաց նց ծառայիցեմք քեզ սրբութբ եւ արդարութբ զամ աւուրս կենաց մերոց։

## Եղիցին կամք քո։

Տէր իմ եւ վարդապետ, որ եկիր առնել եւ ուսուցանել զկամս հօր քո։ Տր ես ծառայ քո եմ, որդի աղախնոյ քոյ, որզինչ կամիս զի արարից, զի պատրաստ է սիրտիմ, պատրաստ է առնել զոր ինչ եւ հրամայիցես, պատրաստ է եւս փախչել, յորմէ եւ արգելուցուս։ Գիտեմ, թէ ոչ ամ որ ասէ քեզ Տր Տր, նա հաճոյ է քեզ, այլ որ պահէ զպատուիրանս քոյս։ Տէր վարդապետ ողորմեաց ինձ, եւ ուսո



ինձ

ինձ առնել զկամս քո, զի մի՛ գիտելով
և ոչ առնելով արժեիցեմ զգան բազում։
Տուր ուրեմն զոր հրամայես, և հրամայ
եա՛ զոր կամիս։

Օ հաց մեր հանապազորդ։

Յ՟ս հովիւ բարի, որ իջեր 'ի յերկնից այց առնել ոչխարաց քոց, ո՟պ հովիւ այց առնէ հօտի իւրում. այլ և արածես ըզ խաշինս քո 'ի վ՟ր պարարտ արօտի, փոխանակ ճաշակելոյ 'ի կաթանէ և 'ի մսոյ նոցին դու մարմնով և արեամբ քով սնուցանես զնո՟, և զանձն քո դնես 'ի վ՟ր ոչխարաց քոց։ Արդ ով հովիւ բարի, մոլորեցայ ես ո՟պ զոչ խար կորուսեալ, և շրջիմ ընդ անկոխ ճանապարհս ոչ գտանելով զարօտ, խնդրեա՛ դու զծառայ քո, և եդեալ 'ի վ՟ր ուսոց քոց կացո՛ 'ի տեղւոջ արօտականի, ուր զխս յառաջագոյն զետեղեցեր, և ինձ ինչ ոչ պակասեսցի, ո՛չ ըստ հոգւոյ և ո՛չ ըստ մարմնոյ. վ՟ս մարմնոյ իմոյ հանես զհաց յերկրէ, և վ՟ս հոգւոյ իմոյ պատրաստես զհացն երկնային, զի մի՛ նքթիցիմ 'ի ճանապարհի։

Թող մեզ զպարտիս մեր։

Յ՟ս փրկիչ ամենաբարեգութ, որ սիրեցեր զմեզ, և մատնեցեր զանձն քո վ՟ս մեր, զի զմեզ փրկեսցես յա՟մ անօրէնութէ, և սրբեսցես քեզ ժողովուրդ ընդունելի։

Զրի վաճառեալք էաք, և առանց գան
ձուց սնոտեաց փրկեցաք. գնեցաք գնովք
մեծագունիւք, բայց ոչ ապականացու ար
ծաթեղինօք կամ ոսկեղինօք, այլ պատուա
կան արեամբ քով: Արդ թող մեզ զպար
տիս մեր, որոց սակս զայս քան մեծագոյն
ի՞նչ հատուցեր, և եթէ դու զանօրէնու
թիս քննես, ո՞ կարէ կեալ. զի ոչ ոք է որ
փրկէ, և ոչ որ ապրեցուցանիցէ. քանզի
ոմ է բաց 'ի քէն որ թողուցու զմեղս, ոչ
եղբայր, և ոչ մարդ, զի 'ի քէն է ողոր
մութին, և առատ առաջի քո փրկութին.

Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն.

Ո՜վ կեցուցիչ և բժիշկ բազմագութ, որ
եկիր յաշխարհ զմեղաւորս կեցուցա
նել. որ զտկարութիս մեր բարձեր, և զզ
ցաւս մեր ճշմարտապէս կրեցեր. դու գո
լով ամենևին ազատ 'ի մեղաց, և անփորձ
'ի չարեաց, փորձանաւորաց չարչարակից
եղեր, ասելով թէ ոչ են պիտոյ բժիշկք
ողջոց այլ հիւանդաց: Արդ ահա՛ բազ
մութիւք հիւանդացս ակնունիմք առ 'ի քէն
առողջութիւն. տեսանես թէ ո՞պ անզօրք և
տկարք եմք, ոչ ընդդիմանալ չարեաց կա
րեմք, և ոչ հեռանալ բարեաց, զի միտք և
խորհուրդք սրտից մերոց խնամով 'ի չարիս
դիւրաշարժք են. և թէպէտ հոգիք մեր
յօժարք են, բայց մարմինք մեր տկարք.

 Դու

Դու ուրեմն փրկիչ կեցո զմեզ, դու եր
կնայինն բժիշկ զօրացո զմեզ. դու գթած
սամարացին օգնեա անկելոցս 'ի ձեռս ա-
ւազակաց. դու խնայեա տկարացս 'ի գործս
առաքինութե. և եկ և բժշկեա զմեզ.

## Բան փրկեա զմեզ 'ի չարէ.

Յս դատաւոր մարդասէր, որում զամ դատաստան ետ հայր, ոչ զի դատիցես զաշխարհ, այլ զի փրկեսցի քև աշխարհ յորժամ յայտնապէս եկեսցես ընդ ամպս երկնից զօրութբ և փառօք բազմօք, 'ի դատել զժողովուրդս քո. և 'ի հատուցանել իւրաքանչիւր ումեք ըստ գործոց իւրեանց, յայն ժամ քաւեա զիս, և մի մտանիցես 'ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամ կենդանի. մի սրտմտութբ քով յանդիմաներ զիս, և մի ըստ անօրէնութե իմում հատուցանիցես ինձ. յաւուր չարի փրկեա զիս 'ի չարէ զի մահ մեղաւորին չարէ, որ է անջատումն 'ի գերագոյն բարւոյդ. ո տայր ինձ յաւուր ահեղի այնմիկ ոչ լսել զձայնն զայն, երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական. քան զի առ քեզ մերձենալ ինձ բարի է, և գտնել առ քեզ զյոյս իմ.

Մաղթանք ննջեցելոց և չարչարելոց ... 

Տր ողորմեա։ Բ. Տր ողորմեա։ Տր ողոր-

Հայր երկնաւոր տր̅, ողորմեաց մեզ։
Որդի փրկիչ աշխարհի տր̅, ողորմեաց։
Հոգիդ սբ̅ տր̅, ողորմեաց մեզ։
Սբ̅ երրորդութին մի տր̅, ողորմեաց մեզ։
Յս̅ յա̅մ ազգաց սպասեցեալ, 'ի հօրէ աշխարհ առաքեցեալ, և 'ի հոգւոյն սրբոյ յղացեալ, ողորմեաց։
Յս̅ բանդ մարմին եղեալ, և զկերպարանս ծառայի առեալ, ողորմեաց։
Յս̅ որ յարգանդի մօր քո առ յովհաննէս եկիր, և զնա զուարճացուցեր, ողորմեաց։
Յս̅ 'ի մարիամայ կուսէն ծնեալ. խանձարրօք պատեցեալ, 'ի մսուր եդեալ, 'ի կուսական ստեանց կերակրեցեալ. և հովուաց յայտնեցեալ, ողորմեաց։
Յս̅ ըստ օրինաց կամաւ թլփատեցեալ. 'ի մոգուց երկրպագեցեալ. 'ի տաճարին ընծայեցեալ. և 'ի գիրկս սիմէոնի գգուեցեալ ողորմեաց մեզ։
Յս̅ յեգիպտոս տարեցեալ, 'ի հերովդէէ 'ի մահ խնդրեցեալ, և 'ի նազարէթ սնուցեալ, ողորմեաց մեզ։
Յս̅ 'ի տաճարին 'ի մէջ վարդապետաց գտեցեալ. և ծնողացդ հնազանդեալ, ողոր։
Յս̅ 'ի յովհաննէ մկրտեցեալ. և 'ի յանապատի փորձեցեալ, ողորմեաց.
Յս̅ որ ընդ մարդկան շրջեցար. և զանարդ և զաղքատ աշակերտս ընտրեցեր, ողոր։



Յս̅

Յս̄ որ ամ̄ հիւանդաց ողորմութին շնոր
հեցեր, և 'ի լերինն առաջի հարցն այլա
կերպեցար, ողորմեաց։
Յս̄ որ ցաւակցելով 'ի վր̄ նմի, արտասուե
ցեր, և հեզութբ̄ յէմ մտեր, ողորմեաց։
Յս̄ որ նախանձու տանն ա̄յ զգնօղսն և
զվաճառօղսն արտաքսեցեր, ողորմեաց։
Յս̄ որ ընդ երեսուն արծաթոյ վաճառե
ցար, և 'ի լուանալ զոտս աշակերտացն խո
նարհեցար, ողորմեաց։
Յս̄ որ զզատիկն ընդ աշակերտսն կերեր,
և զմարմին քո մեզ 'ի կերակուր և զարիւն
քո յըմպելի շնորհեցեր, ողորմեաց։
Յս̄ որ յաղօթս կացեր, և 'ի տագնապի
զքրտունս արեան հեղեր, ողորմեաց։
Յս̄ 'ի հրեշտակէն զօրացար, 'ի յուդայէ
մատնեցար, 'ի յսպասաւորաց կապեցար, և
'ի յաշակերտաց քոց լքեցար և թողար, ող։
Յս̄ առաջի աննայի և կայիափայ կացու
ցար, 'ի յսպասաւորէն ապտակեցար, 'ի սուտ
վկայից չարախօսեցար, 'ի մահ դատապար
տեցար, և յերեսս քո զթուք ընկալար, ող։
Յս̄ կռփեցար, և 'ի տարապարտուց ատե
ցար, ողորմեաց։
Յս̄ որ զթիկունս քո ետուր 'ի հարուա
ծըս, և զծնօտս քո յապտակս, ողորմեաց։
Յս̄ 'ի պետրոսէ երիցս ուրանեցեալ, պի
ղատոսէ կապանօք մատնեցեալ, 'ի հերով
դէսէ

դէէ արհամարհեցեալ, և սպիտակ համ
դերձիւք պախարակեցեալ, ողորմեաց։
Ո՜ քան զբարութիւն անարգ. համարե
ցեալ. և անողորմաբար գան հարկեցեալ, ող.
Ո՜ պատժեցեալ վս̃ մերոց անօրէնութեց.
և իբրև զբոր ոտ համարեցեալ, ողորմեաց։
Ո՜ զգեղամիտ կարմիր զգեցեալ. պսակա
փշոց պսակեցեալ. և զեղէգն փոխանակ
գաւազանի ընկալեալ, ողորմեաց։
Ո՜ 'ի հրէից 'ի խաչ խնդրեցեալ. չարա
չար 'ի մահ դատապարտեցեալ, և կամացն
հրէից մատնեցեալ, ողորմեաց։
Ո՜ զխաչն բարձեալ. և իբրև զոչ խար
'ի սպանդ վարեցեալ, ողորմեաց։
Ո՜ զմուսեալ գինեաւ և լեղեաւ կերա
կրեցեալ, և մերկ 'ի խաչին բևեռեցեալ,
ողորմեաց մեզ։
Ո՜ որ սիրեցեր զմեզ, և արեամբ քով 'ի
մեղաց սրբեցեր, ողորմեաց։
Ո՜ որ փոխանակ մխիթարութե̃ն որ քեզ
առաջի կայր, յանձն առեր զխաչ. և ար
համարհեցեր զամօթ, ողորմեաց։
Ո՜ որ մատնեցեր զանձն քո վս̃ մեր պա
տարագ, և զենումն ա̃յ 'ի հոտ անուշից, ող.
Ո՜ ընդ անօրէնս համարեցեալ, և 'ի մէջ
երկուց աւազակաց խաչեցեալ, ողորմեաց։
Ո՜ արքունական վերնագրով 'ի խաչին
'ի պիղատոսէ պատուեցեալ, ողորմեաց։

Դու որ վասն թշնամեաց զհայր աղաչէցեր․ նախատինք մարդկան եղեր․ յանցաւորացն հայհոյեցար, և'ի հրէից անգոսնեցար, ող․

Դու որ 'ի խաչին 'ի զօրականացն ձաղեցար, և յաւազակէն նախատեցար, ողորմեա։

Դու որ աւազակին զղջացելոյ զդրախտն խոստացար, ողորմեա։

Դու որ զյոհաննէս մօր քում յորդիութն յանձնեցեր, ողորմեա։

Դու որ ասացեր առ հայր ընդէր թողեր զիս․ և զքացախն 'ի ծարաւին արբեր, ող․

Դու որ զամենայն գրեալսն զքէն 'ի խաչին կատարեցեր․ և զհոգի քո 'ի ձեռս հօրն աւանդեցեր, ողորմեա։

Դու որ գեղարդեամբ խոցեցար, և'ի կողէ քումմէ զարիւն և զջուր բղխեցեր, ողոր,

Դու զմեղս մեր մարմնով քով բարձեր 'ի վերայ խաչին, և վիրօք զմեզ բժշկեցեր, ողոր․

Դու 'ի խաչէն 'ի ջուցեալ, սուրբ կտաւօք պատեցեալ, և 'ի նոր գերեզմանի թաղեցեալ ողորմեա մեզ․

Դու որ զկնի մահուանն 'ի դժոխս իջեր, և զերամս արդարոց ազատեցեր, ողորմե․

Դու որ մեռար վասն մեղաց մերոց, և յարեար վասն զմեզ արդարացուցանելոյ, ողորմեա․

Դու որ 'ի յերկինս համբարձար, ընդ աջմէ հօր նստար, փառօք և պատուօք պակեցար, ողորմեա․



Դու

Յ̄ Թագաւոր Թագաւորաց և տ̄ր տէ
րանց, ողորմեաց։
Յ̄ որ պատրաստեցեր մեզ օթևանս 'ի
տան հօր քո, ողորմեաց։
Յ̄ բարեխօս մեր առ հայր, ողորմեաց։
Յ̄ որ զհոգին ս̄բ աշակերտացն քոց շը
նորհեցեր, ողորմեաց։
Յ̄ զկենդանիս և զմեռեալս դատելոց
ես, ողորմեաց։
Յ̄ որ իւրաքանչիւրոց ըստ գործոց իւ
րեանց հատուցանելոց ես, ողորմեաց։
Քաւիչ լեր։ Լ, երեա́ մեզ յ̄ս։
Յ̄ամ̄ չարէ փրկեա́ զմեզ յ̄ս։
'Ի յանկարծահաս մահուանէ, և 'ի յորոգայ
թից սատանայի. փրկեա́ զմեզ յ̄ս։
'Ի բարկութե̄ և յատելութե̄ և յամ̄ չարա
կամութե̄ փրկեա́ զմեզ յ̄ս։
'Ի մշտնջենաւոր մահուանէ, փրկեա́ զզ
մեզ յ̄ս։
Ս̄ խորհրդեան սրբոյ մարդեղութե̄ քոյ
փրկեա́ զմեզ յ̄ս։
Ս̄ գալստեան, ծննդեան, Թլփատութե̄
և անուանակոչութե̄ քոյ, փրկեա́ զմեզ յ̄ս։
Ս̄ մկրտութե̄ և ս̄բ պահոց քոց. փրկեա́
զմեզ յ̄ս։
Ս̄ աշխատութեց. խոնջմանց, տքնու
թեց, և քրտանց քոց. փրկեա́ զմեզ յ̄ս։
Ս̄ փշոյ պսակի, խաչի. չարչարանաց,

ծարաւու, արտասուաց, և մերկութե՛ քոյ փրկեա՛ զմեզ յն̃։

Ս ն̃ սրբազանից հնկից վիրաց քոց փրկեա՛ զմեզ յն̃։

Ս ն̃ մահուան և թաղման քոյ. փրկեա՛ զմեզ յն̃։

Ս ն̃ առաքման հոգւոյն սրբոյ մխիթարչի. փրկեա՛ զմեզ յն̃։

Յաւուր դատաստանի, կեցո՛ զմեզ յն̃։

Մեղաւորքս զքեզ աղաչեմք լուր մեզ։

Զի զերծեալք 'ի մեղաց իցեմք արդարութե՛ կենակիցք, աղաչեմք զքեզ լուր մեզ։

Զի պարծիցեմք միայն 'ի խաչ և 'ի չարչարանս քո, աղաչեմք զքեզ։

Զի վն̃ սիրոյ քոյ ատեցեմք զաշխարհ, աղաչեմք զքեզ։

Զի զմեռելութի̃ խաչին յա̃մ ժամ 'ի մարմինս մեր կրիցեմք, աղաչեմք։

Զի զխաչ քո բառնալ և զհետ քոյ գալ միշտ ցանկայցեմք, աղաչեմք։

Զի այսու հետև մեռեալք 'ի մեղաց, 'ի նորոգումն կենաց շրջիցեմք. աղաչեմք։

Զի ո̃պ կցորդ եմք չարչարանացդ, նոյնպէս և մխիթարութե̃դ լինիցիմք, աղաչ։

Գառն այ̃ որ բառնաս զմեղս աշխարհի, լուր մեզ յն̃։

Գառն այ̃ որ բառնաս զմեղս աշխարհի. ողորմեաց մեզ յն̃։

Գառն այ որ բառնաս զմեղս աշխարհի, ներեա մեզ յս։

Աղօթք առ չարչարեցելոյն քս.

Յս քս բաղձալի փրկիչ իմ, մի վրիպեր զիս 'ի պտղոյ դառնակսկիծ չարչարանաց և մահուան քոյ. այլ վն տառապեցեալ և վիրաւորեցեալ սրտի քոյ պարգևեա ինձ զշնորհս այժմ և 'ի ժամու մահուան իմոյ, Ամէն։

